


ԽԱՔԱՐԲՁԻԿ

«Մանկանց երկիրը» մանկապատանեկան ալմանախի հավելված | 2'2015





Նկարը՝ Աճրի Չիլինգարյանի 11տ.





Լուսանկարը՝ Պիանա Շահբաջյանի

Միջազգային մեդիա ճամբար Բյուրականում

«Մանանա» կենտրոնը Սերբիայի Մեդիա կրթության կենտրոնի հետ համատեղ հուլիսի 15-23-ը Բյուրականում կազմակերպել էր մեդիա ճամբար: Գործընկերները կազմակերպվել էր «Երիտասարդների արտահայտման ազատության խթանումը քաղաքացիական լրագրության միջոցով» ծրագրի շրջանակներում, որը իրագործվում է Եվրոպական Միության աջակցությամբ: Գործընկերները մասնակցում էին պատանի թղթակիցների ցանցի 25 երիտասարդներ Չայաստանի տարբեր մարզերից և Սերբիայից: Գործընկերները դասընթացավարները կազմակերպել էին հետաքրքիր դաս-սեմինարներ ֆոտոլրագրության, դոկումենտալ կինոյի, անիմացիայի և քաղաքացիական լրագրության թեմաներով: Եղան նաև գործնական պարապմունքներ, որի ընթացքում

հայ և սերբ երիտասարդները հնարավորություն ունեցան միասին աշխատելու վավերագրական ֆիլմերի, ֆոտոռեպորտաժների, անիմացիոն ֆիլմերի և իհարկե, լրագրողական նյութերի վրա: Ի սկզբանե որոշվել էր հինգ ֆիլմ նկարել, բայց ոգևորությունն այնքան մեծ էր, որ հասցրեցինք տասներկու դոկումենտալ և մեկ անիմացիոն ֆիլմ նկարել: Ֆիլմերի թեմաները բազմազան էին. Արագածի փեշերին բնակվող եզդիներ, երիտասարդ աստղագետներ, «Այրուծի» հեծյալ ակումբ, գյուղի երիտասարդների կյանք և այլն: Ֆիլմ նկարեցինք նաև 1988թ.-ին Չայաստանին օգնություն բերող սերբական ինքնաթիռի աղետի մասին՝ անդրադառնալով հայ-սերբական համագործակցությանը:

Գործընկերները ընդարկեցին ստեղծագործական գաղափարներ ու բանավիճեցին տարբեր թեմաների շուրջ:

Գործընկերները ընթացքում ոչ միայն ունեցանք տեսական և գործնական պարապմունքներ, այլ նաև վարպետության դասեր

աշխարհահռչակ կինոռեժիսոր Քիչտոֆ Զանուսսիից և երիտասարդ հայ ռեժիսոր Վահրամ Մխիթարյանից:

Մեր պատանի թղթակիցները ոչ միայն սովորում և աշխատում էին, այլև ծանոթանում հայկական մշակույթին, այցելում տեսարժան վայրերը: Մեզ համար կազմակերպվել էին էքսկուրսիաներ դեպի Ամբերդ, Բյուրականի ատոլադիտարան, Օհանավանք, Քարի լիճ, նաև Երևան՝ մասնակցելու «Ոսկե ծիրան» կինոփառատոնին:

Մեդիա ճամբարը մեզ հետագա աշխատանքի համար խորը գիտելիքներ տվեց, անջնջելի տպավորություններ, ինչպես նաև մեծ խթան դարձավ՝ մեծապես նպաստելով երիտասարդների ինքնաարտահայտման ազատության ձևավորմանը և համագործակցային կապերի ստեղծմանը:

Շուշան Գարությունյան

Լուսանկարը՝ Դիանա Շահբազյանի



Նկարահանումների մեկնարկը տրված է

Ես աշխատելու էի «Բյուրական գյուղի երիտասարդության առօրյան» թեմայի շրջանակներում: Շատ ուրախացա, քանի որ աշխատելու էի ընդունակ, ընկերասեր մարդկանց հետ:

Պետք է նկարահանեինք երիտասարդների, որոնք աշխատում էին օդերևութաբանական կայանում, իսկ օրվա մյուս հատվածն էլ զբաղված էին գյուղատնտեսական աշխատանքներով: Սակայն տղաներից մեկի հորը հիվանդանոց էին տեղափոխել: Անկեղծ ասած, ուրիշ պայմանավորվածություն չկար, սակայն նկարահանումը պետք է սկսեինք:

-Ոչինչ, կիջնենք գյուղամեջ, ու այնտեղ կցրվենք տարբեր ուղղություններով, - ասաց Սիսակը:

-Բա որ չթողնե՞ն նկարել, բա որ կոպտե՞ն:

-Մենք ձեր կողքին ենք, համ էլ բյուրականցիները շատ բաց և հյուրընկալ մարդիկ են:

Մեքենան կանգնեց գյուղամիջում: Աղբյուր-հուշարձանի մոտ երեք պապիկ էին նստած:

-Բարի լույս, ինչպե՞ս եք: Մենք Երևանից ենք, այս պատանիներն էլ պատանի ռեժիսորներ են, որոշել են ձեր գյուղի մասին ֆիլմ նկարել,- նրանց մոտեցավ տիկին Ռուզանը:

-Երևանի՞ց եք, ասում եք՝ կինո՞ եք նկարում... Մեր եկեղեցիները, ձորը նկարեք, սիրուն բան շատ կա,-

ոգևորվեցին պապիկները:

-Էդ էլ կնկարեն, բայց երեխեքը ուզում են մարդկանց մասին նկարել:

-Եկեք՝ տանեմ իմ արհեստանոց,- ասաց պապիկներից մեկը, հետո իմացանք, որ անունը Կոյա է,- ես էստեղից մի 500 մետր վերև եմ ապրում, երաժշտական գործիքներ եմ սարքում:

-Գնացինք,- ոգևորվեցինք մենք ու առաջ ընկանք:

Ճանապարհին տարբեր դարպասներից հետաքրքրասեր երեխեք էին ծիկրակում, հետո դուրս էին գալիս ու մեզ ժպտում:

Այնքան հետաքրքիր է գյուղական

մարդկանց մտածելակերպը: Ոմանց նկարելիս դու արժանանում ես հարգանքի, իսկ ոմանց...

- Ամերիկացիներ են եկել,- բղավում էին երեխեքը ու մեզ նայում:

Մինչ մեր մի խումբը երաժշտական գործիքների վարպետ ութսունյոթամյա Կոյա Թորոսյանին էր նկարահանում, մյուս խմբով որոշեցինք, որ պետք է նկարենք, թե ինչպես են երեխաները խաղում գյուղում: Խնդրեցինք նրանց, որ խաղան և պատկերացնեն, որ մենք այդտեղ չենք:

Նկարելիս մենք չէինք խոսում, որպեսզի մեր ձայնը չլսվի:

- Ես ինչի՞ չեմ իրենց հետ թարգմանիչ բերել,- էլի հարցնում էին իրար:

Թարգմանի՞չ... Շատ հետաքրքիր է, իմ ինչի՞ն է պետք թարգմանիչը, երբ ես գիտեմ իմ մայրենի լեզուն՝ մտածում էի ես:

-Շնորհակալ եմ երեխաներ,- ասացի ես, երբ ավարտեցի նկարելը, և երբ պատրաստվում էի հեռանալ, ականջիս հասավ...

-Վա՛յ, հա՛յ են: Ինչ ամոթ ա,- գյուղի հարսներից մեկի շուրթերից լսեցի այս խոսքերը:

Վաղն էլ ենք նկարահանելու:

Արդեն չենք ամաչում մոտենալ անծանոթ մարդկանց, ծանոթանալ, թույլտվություն խնդրել...

Իսկ Բյուրական գյուղի բնակիչներն իսկապես շատ մարդամոտ ու բացսիրտ են:

Մանե Մ. Սարգսյան





Լուսինե Կարապետյանի

Մի բուռ կապույտ կանաչի վրա

Շատ մարդկանց և նաև ինձ մի հարց է հետաքրքրում, թե ինչ գործ ունեի ես մեղվապահի մոտ: Կիսաստացված լրագրողի մասնագիտությամբ ինչ-որ մեկին էլի պիտի զոհ դարձնեի:

Ես սիրահարված եմ աշխարհին, երբ առանց ակնոցի եմ: Այդ օրը առանց ակնոցի էի: Մի քիչ հեռու կանգնեցիմք: Կանաչի մեջ երևի բոլորի ուշադրությունը գրավեցիմ այդ տմակները. մեծ կապույտ տմակ, իսկ կողքին՝ հավաքված մեղվի բներ. կարծես ձագուկները լինեին:

-Յե՛ղ ի՞նչ է ասել այստեղ:
-Երբեք ու ոչ մի տեղ ասելը հեշտ չէ, պիտի աշխատեք, աշխատելը հե՛շտ է,- սևեռում նայեց ինձ մեղվաբույծ Դերենիկ պապիկը:

Ես երբեք չեմ աշխատել ու հարցնում եմ՝ արդյո՞ք հեշտ է ասելը:

-Գիտեք, մեղուներն էլ եմ մարդկանց նման, մարդկանցից ավելի խելացի ու աշխատասեր: Եթե մեկ օր աշխատավոր մեղուներից մեկը առանց նեկտարի գա, նրան տուն չեմ թողնի, բայց քո մայրը հաստատ քեզ կթողնի,- նորից նայեց ինձ:

Գիտեք, երբ ուզում եք մտածել, ստեղծագործել, մի այցելեք փիլիսոփայի կամ գիտնականի: Գտեք մի լեռնցու կամ հողագործի, նստեք կողքին ու լռեք, ու ոչ թե լսեք, այլ վայելեք նրա խոսքը: Մարդիկ, որոնք հաճախ միայն տարրական կրթություն ունեն, կարողանում են կյանքը վերլուծել, հասկանալ երևույթները ամենախորքային տեսանկյունից:

Բոլոր գիտությունների հիմքը բնությունն է, կյանքի հիմքը ևս: Ուստի, կյանքը հասկանալու համար ուղղակի մոտ եղեք բնությանը:

-Լավ աշխատանքը գնահատվում է,- շարունակեց նա,- Ես դժգոհ չեմ իմ աշխատանքից: Հորիցս եմ ժառանգել բնության հետ շփվելու կանոնները, հայրս՝ պապիկիցս:

Աշխարհից կտրված տմակի մեջ ապրող մեղվաբույծ, առանց հեռախոսի, համացանցի, բայց ավելի երջանիկ, ավելի աշխատասեր ու գնահատող:

-Տեղեկացված եղեք ամեն ինչից, դուք չգիտեք, թե կյանքում ինչ է պատահելու ձեզ հետ: Տեսնո՞ւմ եք այն դեղատուփը,- ցույց տվեց առաստաղից կախված դեղատուփը,- տարբեր դեղեր են: Հիմա ենթադրենք, մեր հյուրերից մեկին մեղու կծեց: Ալերգիա ունենալու դեպքում ես պիտի

առաջին բուժօգնություն ցուցաբերեմ: Սարերում ասելը և հաճելի է, և վտանգավոր: Եթե երեկ եկած լինեիք, մեղվից բացի նաև գայլ նկարած կլինեիք: Չնայած հնարավոր է, որ հիմա էլ գա, անընդհատ իջնում եմ:
-Իսկ դուք փոխանցո՞ւմ եք ձեր երեխաներին այն հմտությունները, որ ունեք:

-Անպայման, երեք տղաներիցս երկուսը շարունակելու են մեղվապահությունը, իսկ մեծ տղաս ավերգիա ունի, դժվար թե կարողանա աշխատել այստեղ:

-Այս փեթակի գույնը պատահական է ընտրված:

-Ոչ, գույները ընտրում ենք այնպես, որ մեղուները կարողանան կողմնորոշվել, այսինքն, չխառնեն կանաչ գույնը փեթակի գույնի հետ. կարմիր, դեղին, կապույտ:

-Իսկ ո՞րն է ամենալավ մեղրը: Կան մեղվապահներ, որ շաքար են խառնում, կամ տարբեր խարդախություններ են անում:

-Ամենալավ մեղրը մարդու խիղճն է: Ուղղակի պետք է անկեղծ լինել, չպետք է ուրիշներին խաբել, և որ ամենակարևորն է, ինքը քեզ խաբել:

Արդեն հեռանում էինք: Շուրջբոլորը կանաչ էր. թարմությունը, երջանկությունը, սարերում նույնիսկ սերն է կանաչ, ու միայն փեթակներն ու Դերենիկ պապիկի տմակն էր կապույտ:

Հետդարձին անընդհատ կրկնում էի Դերենիկ պապիկի խոսքը՝ ամենալավ մեղրը մարդու խիղճն է: Միայն թե կարողանամ այդ մեղրը պահպանել...

Լուսինե Կարապետյան



Լուսինե Կարապետյանի



Լուսանկարը՝ Դիանա Շահբաջյանի

Եզդիները

Այսօր մեզ շատ հետաքրքիր և միաժամանակ ծանր օր է սպասվում: Արդեն քննարկել ենք բոլոր գաղափարները, ընտրել լավագույն հինգը, մի քիչ դժվարությամբ բաժանվել թիմերի: Գաղափարները տարբեր են՝ մեկը մյուսից հետաքրքիր, ինչը իր հերթին դժվարացնում է մոտ քսանհինգ գաղափարներից ընտրել լավագույն հինգը:

Նախաձաշից հետո հավաքվեցինք վերջին քննարկմանը, որի ժամանակ մնում էր միայն ուշադրությամբ հետևել խորհուրդներին և մտապահել: Վերջապես ճամփա ընկանք ամենքս մեր թիմով՝ տարբեր ուղղություններով: Մենք գնում էինք եզդիների մոտ, ովքեր իրենց հոտերն առած բարձրացել էին Արագածի արոտավայրերը: Չնայած նրան, որ ես փոքրիշատե ծանոթացել էի եզդիների պատմությանը և լրիվ պատկերացնում էի իմ անելիքը, մի փոքր հուզվում էի:

Եզդիներն իրանալեզու ժողովուրդ են, ովքեր ապրում են Թուրքիայում, Իրաքում, Իրանում, Հայաստանում և այլ վայրերում: Կրոնը Շարֆադին է, որի հիմքում ընկած է միաստվածության գաղափարը: Նրանց աստվածը գերբնական ուժով օժտված Խուդեն է, ով համարվում է տիեզերքի արարիչը: Նրանց ուխտագնացության միակ վայրը Շեյխ Ադիի գերեզմանն ու դամբարանն է, որը գտնվում է Իրաքում: 2012 թվականին Արմավիրի մարզում բացվեց «Զիարատ» եզդիական տաճարը: Դա առաջին եզդիական

տաճարն է իրենց հայրենիքից դուրս: Ամեն տարի սեպտեմբերին աշխարհի եզդիները գալիս են Հայաստան, իրենց պաշտամունքը մատուցում: Եզդիների ամուսնությունները սովորաբար կատարվում են նույն հասարակական շերտի՝ կաստայի շրջանում: Եզդի աղջիկներն ամուսնանում են մինչև 17 տարեկանը: Մեր առաջին կանգառը եղավ մեզ արդեն ծանոթ եզդի ընտանիքի մոտ: Նրանց հետ մենք



Լուսանկարը՝ Ղոզիսիմե Եղիազարյանի

ծանոթացել ենք օրեր առաջ, երբ իջնում էինք Արագածի գագաթից, իսկ «Մանանայի» ավագ սերնդի ներկայացուցիչները եղել են այստեղ մոտ ինը տարի առաջ և հրատարակել են նրանց մասին ավանախա: Իջնելով մեքենայից, մոտենում են նրանց և ողջունում, մինչ մնացածը

իջեցնում են տեխնիկան: Ընտանիքը միանգամից ճանաչում է մեզ, և այնպիսի տպավորություն ստեղծում, կարծես սպասում էին մեզ: Հենց հաջորդ պահին ես հասկանում եմ, որ դա այդքան էլ այդպես չէ, երբ չարչարված հայացքով, բայց առույգ ու կոշտ ձայնով մի երիտասարդ զգուշացնում է, որ իրենց չնկարենք: Մենք մտածում ենք, որ իրենց ավանախը ցույց տալուց հետո նրանք կփոխեն իրենց միտքը: Ամսագիրը ցույց ենք տալիս: Բնականաբար ուրախանում են և տարբեր հարցեր տալիս, գտնում իրենց բարեկամներին և ծիծաղում: Բայց երիտասարդը չի փոխում իր միտքը: Հետաքրքիրն այն էր, որ միայն երիտասարդը զիտեր իրենց տաճարի մասին և պատմեց, թե ինչպես են ամեն տարի գնում և զոհ մատուցում իրենց աստծուն: Հնարավորինս շատ տեղեկություններ հավաքելուց հետո գնում ենք հարևան ընտանիքի մոտ: Այդ ժամանակ նրանք զբաղված էին ոչխար կթելով, դա հետաքրքիր մի տեսարան էր: Այստեղ մենք ծանոթացանք մեր փոքրիկ ընկերոջ՝ Աշոտի հետ, ով ցանկացավ մեզ ցույց տալ իրենց ոչխարներին: Նկարահանումները շարունակվեցին մի քանի ժամ: Մայրամուտից առաջ հետ վերադարձանք, հաջորդ օրերին պետք է հասցնենք ֆիլմը մոնտաժել:

Սամվել Մքոյան

Հարսը

... Մեր մեքենան դանդաղ մոտենում էր եզդիների վրանների: Զգում էի, որ ամեն մի անիվի պտույտի հետ սպասումն ու անհամբերությունը ավելանում էին մեջս: Ա՛խ, Արագածը՝ գույների, մշակույթների, կենցաղների, անգամ քաղաքակրթությունների այդ յուրօրինակ խառնարանը որքա՛ն էր հրապուրել մեզ...

Մենք կանգ առանք վրանների մոտ և եռանդով ու ոգևորությամբ դուրս թռանք մեքենայից. առաջին անգամ էի լինում եզդիների յայլայում: Շրջակայքն ամբողջությամբ թաղված էր լույսի մեջ, ու թվում էր՝ կյանքն այստեղ ավելի դանդաղ շփոթվել էր ընթանում: Դեռևս հեռվից նշմարվում էին բրդերի փոքր դեզերը, վացքի բազմագույն պարանները, իսկ վրանից ելնող վառարանի ծուխն ու շների հաչոցն ամբողջացնում էին



Լուսանկարը՝ Դիանա Շահբազյանի

հետաքրքրասիրությունս, իբր շատ պատահական, բայց արագ վազեցի վրանի ներսը: Գիտեի, որ պիտի հանդիմանանքի արժանանամ, բայց լրագրողի հետաքրքրասիրությունը հաղթեց մարդու քաղաքավարությանը. ախր, շատ էի ուզում ներսում մի քանի ֆոտո անել:

-Չարսին չնկարեք,- հաստատ ու վախեցած ճչաց սկեսուրը,- ի՞նչ գիտեմ, ինչ ժուռնալներում եք տպելու...

Իսկ սկեսուրի սկեսուրը, որի գրկին

Ես զարմացած սկսեցի շուրջս նայել. ի՞նչ հարս: Վրանում միայն մի վտիտ աղջիկ կար՝ մոտ տասնհինգ տարեկան: Մի անկյուն քաշված՝ լվանում էր հատակին դրված տաշտի միջի ամանները: Վրանի մթությունն էլ ավելի էր շեշտում կերպարի խեղճությունը: Կենցաղն անխնա էր գտնվել աղջկա նկատմամբ:

Ուզեցի խոսել հետը, բայց հայացքը հառեց սկեսուրի դեմքին, հետո անխոս կախեց գլուխն ու շարունակեց լվանալ ափսեները: Ես դուրս եկա

պատկերը: Քիչ հեռվում վազվզում էին եզրի երեխաները՝ փնթի ու անխնա հագնված: Քիչ այն կողմ արածում էին ոչխարներ, և կարծես կյանքն այստեղ ներկայացվում էր նրանց ու նրանց հարմարավետության համար ստեղծված գոյության ձև...

Մենք ոգևորված վազվզում էինք այս ու այն կողմ, ֆոտոներ անում. ամեն ինչ նոր էր մեզ համար: Նույնիսկ շներն այստեղ մի տեսակ ուրիշ էին, խորհրդավոր և անսովոր մեծ: Փոքրիկ Արծիվը վազվզում էր այս ու այն կողմ և պատմում իրենց ոչխարների մասին, ոգևորված ցույց տալիս շրջակայքը:

Արդեն չէի կարողանում զսպել



Լուսանկարը՝ Դիանա Շահբազյանի

նստած էր մոտ մի տարեկան երեխա, խիստ ու նահապետական հայացքով հաստատեց հարսի ասածը:

վրանից: Սկեսուրների խիստ հայացքը ջերմացավ իմ մի ժպտից ու ջերմ վերաբերմունքից: Չարցրի, թե քանի՞ տարեկան է հարսը: Սկզբից շփոթվեց, հետո ասաց՝ տասնյոթ: Մի տեսակ չհավատացի, որովհետև տասնյոթ տարեկանի մման չէր, և առանձնապես մարմինն էլ լավ ձևավորված չէր, իսկ երբ իմացա, որ փոքրիկ երեխան իրենն է... Չէ, դուք կարո՞ղ եք պատկերացնել իմ ապշանքը, որ համարյա նրա տարեկիցն են, և ում ուղեղը լցված է միայն «չարածժիությունների» և արկածների մասին մտքերով...

... Մենք հեռացանք՝ գոհ մեր աշխատանքից և կյանքի մասին տարբեր ըմբռնումներով՝ այդպես էլ չտարբերելով էկզոտիկայի և կենցաղի սահմանները: Նրանք էլ...

Շուշան Դարությունյան



Լուսանկարը՝ Յոհիսիմե Եղիազարյանի



Արկածներ գյուղում

-Ես կգամ:

-Ես էլ,- բացականչեցինք ես ու Նելլին, երբ որոշվում էր, թե ով է հովիվների և կովերի նախիրի հետ գնալու գյուղ՝ ճանապարհին, իհարկե, նկարելով նրանք:

Երկուսով ճանապարհ ընկանք:

-Ուրեմն, ես կխոսեցնեմ, դու կնկարես,- ասացի ես Նելլիին:

-Նել, արի արագ հասնենք հովիվներին, էս շունը ինձ թարս ա նայում,- վախեցած վազեցի ես՝ նայելով գոմնացող շանը:

Մենք վազելով հասանք հովիվներիին: Պարզվում է, որ բոլոր կովերը գիտեն իրենց տան տեղը, և երբ մտնում են գյուղ, առանձնանում են ու գնում ճիշտ իրենց տան կողմը և կանգնում դարպասների առաջ: Զբավարարվելով միայն հովիվներով՝ ես ու Նելլին որոշեցինք նկարել նաև այդ տեսարանը և մի կովի հետևից թեքվեցինք դեպի քարքարոտ գառիթափը:

-Նկարի, նկարի, նկարի:

-Ստեղ հնարավոր չի, քարքարոտ աս:

-Լավ, արի արագ գնանք հետևից, տուն մտնելուց կնկարենք:

Արագ լավ էր ասված, բայց այդ քարքարոտ ճանապարհով արագ գնալը նույնքան անհնար էր, որքան այդ կովի հետ նկարահանման համար պայմանավորվելը: Ճանապարհի երկու կողմերից էլ մեծ փշեր էին, և մինչ ես նվնվում էի, որ փուշը պատռել է ձեռքս, կովը անհետացավ մեր

տեսադաշտից:

-Լավ, չեմ հասկանում, էդ մեծ կովը ո՞ր կորավ,- դեռ շարունակում էի նվնվալ ես՝ նկատելով, որ շուրջս տներ չկային, ուր կարող էր մտած լինել կովը:

-Արի՛ հետ գնանք գլխավոր փողոց,- առաջարկեց Նելլին:

-Էսքան եկել ենք, որ հետ գնա՞նք,- ընդդիմացա ես,- ոչ մի հետ, էդ փշերի միջով, միայն առաջ,- բացականչեցի ես և ավելացրի,- փշերի միջով:

Շարժվեցինք առաջ լրիվ անծանոթ գյուղում, լրիվ անծանոթ փողոցով, եթե իհարկե, դա կարելի էր փողոց անվանել:

-Հա լավ, փոքր գյուղ ա, ոնց էլ լինի՝ մի տեղ դուրս կգանք,- կատակում էի ես:

-Արի, արի, մի տատիկ ա երևում:


Մենք վազեցինք տատիկի մոտ, որը մեզ փրկարար էր թվում: Այս տատիկը, ինչպես նաև Բյուրական գյուղի մյուս բոլոր բնակիչները, շատ հյուրասեր ու մարդամոտ էր: Ճանապարհը մեզ ցույց տալուց հետո սկսեց հետաքրքրվել, թե ինչ ենք նկարում, և ինքն էլ պատմեց գյուղի մասին, ինչը մենք նույնպես նկարեցինք:

-Հեսա, Տիգրանս եկավ, հետաքրքիր բա՞ն էք ուզում, Տիգրանս կպատմի, գիտե՞ք ինչ լավ տղա ա,- իր հարևանին էր գովում տատիկը, երբ մեզ մոտեցավ Տիգրանը:

-Երեխեք, էս ի՞նչ եք էսքան նկարում:

-Մենք «Մանանա» կենտրոնից ենք,- հերթական անգամ սկսվեց պատմությունը:

Մարիամ Նալբանդյան



Pixilation կամ կենդանի կերպարներ ապագա մուլտի մեջ

Կարելի է ասել լույսը բացվելու հետ մեկտեղ, ինձ համար մի նոր հասկացության բացահայտում եղավ: Բառ, որին ես ծանոթ չեի:

Քննարկումների ժամանակ ես չեի հասկանում, թե ինչի մասին է խոսքը: Հարցնում էի երեխաներին, նրանք ինձ բացատրում էին, որ դա լուսանկարներից կազմված անիմացիա է:

Ես մի փոքր ուշացա քննարկումից՝

Այրուծի

Ես ինձ երջանիկ եմ համարում, որովհետև կարողացա երկու օրում բացահայտել մի հրաշալի աշխարհ, որը մարդկային աշխարհից հետո ամենահետաքրքիրը կարող է համարվել: Ես բացահայտեցի ձիերի աշխարհը: «Այրուծի» հեծյալ ակումբի մասին շատերը գիտեն, այդ թվում նաև ես, բայց ուղղակի իմանալն ու այնտեղ լինելը միանագամայն տարբեր են:

Ձիերին պաշտում եմ. նրանց հետ կապված բազում հետաքրքիր ու անմոռանալի հիշողություններ ունեմ: Ինձ համար ուղղակի ամենամեծ ուրախությունը կարող էր լինել կրկին ձիերի հետ շփվելն ու հեծնելը: Իմ այս մեծ ցանկությունը չէր կարող ազդեցություն չունենալ իմ ընտրության վրա, թե որ ֆիլմի աշխատանքային թիմում ներգրավվեմ: Երկու օրվա նկարահանումները անմոռանալի էին: Բնականաբար կսկսեմ այն մարդուց, ով այդ ակումբի ոգին է: Քեռի Գագիկին՝ Գագիկ Փարադյանին, գիտեմ բոլոր նրանք, ովքեր երբևէ եղել են այնտեղ: Բարի, հոգատար, խիստ ու բոլորին հարազատ Քեռին իշխում է իր տան, իր այգու, իր ձիերի վրա: Իր ձիերը ամենահարազատը նրան են համարում, քանի որ միայն Քեռին է ընդունակ հասկանալ իրենց տրամադրությունը, ցավը, հոգանծությունը, կամակորությունները: Քեռին շփվող մարդ է: Ինքը բոլորին հարազատ է համարում, բոլորն էլ՝ իրեն: Ակումբի կոլորիտը ինքն է պահպանում իր հունորներով: «Ես աշխարհին հունորով եմ նայում», -ասում է նա: Քեռին ոչ



Լուսանկարը՝ Դավիթ Ասլանյանի, 17տ.

միայն բոլորի սիրելի Քեռին է, այլ նաև հրաշալի հայր է, պապիկ ու ամուսին, ուսուցիչ ու ընկեր...Ու մարդ, հրաշալի ուրախ մարդ: Սա ես ինձ համար պարզել եմ ընդամենը նրան իր շուրջը գտնվող մարդկանց հետ շփվելիս տեսնելուց: Քեռու և ձիերի ընկերությունը տեսնելուց հետո վստահ եմ, որ եթե մի քանի օրով նա բացակայի ակումբից, ձիերը կտխրեն, իրոք, կտխրեն, որովհետև իրենցից կպակասի հասկացված լինելու զգացողության ամենօրյա չափաբաժինը: Ինձ թվում է՝ մենք՝ մարդիկս, նախանձելու տեղ ունենք, քանի որ ձիերը այս աշխարհում մարդ էակի կողմից ավելի հասկացված են, քան մեզինց յուրաքանչյուրը: Հիմա ուզում եմ խոսել այն մասին, թե ակումբն ինչ է տալիս մարդկանց, երեխաներին: Ես այժմ ուղղակի ներկայացնելու եմ իմ տեսածը: «Այրուծիում» բնության ու մարդկանց ներդաշնակություն է, փոխադարձ

սեր, հանդուրժողականություն, խաղաղություն: Եթե հավատայի, որ որևէ կատարյալ բան գոյություն ունի, ապա դա կլինեի այստեղի օդը՝ լի երանելի հանգստությամբ: Այստեղ ամենակենդանատյաց մարդն անգամ իրեն մեղավոր կզգա այս կենդանիների առաջ, որոնք անշահախնդրորեն պատրաստ են օգնել երեխաներին առողջ լինել ու ավելի լավը դառնալ:

Կենդանիների հետ ընկերությունը այն ճանապարհներից մեկն է, որը կարող է մարդու մեջ արթուն պահել մարդկայինը: Այստեղ երեխաներին սովորեցնում են մարդ ու ընկեր լինել, լինել հոգատար ու սրտացավ: Այստեղ թաքնված է հաշտ ապրելու գաղտնիքը:

Հուսով եմ, մեր ֆիլմով կկարողանանք ձեզ փոխանցել «Այրուծի» ակումբի մթնոլորտը:

Վարսեր Զաքարյան

թե ինչի մասին ենք նկարելու pixilation-ը:

Երեխաները արդեն գիտեին, թե ովքեր են մասնակցելու: Նրանք սկսեցին կամաց-կամաց զբաղեցնել իրենց «դիրքերը», երբ Սիսակը ինձ ասաց.

-Մանե, ինչի՞ ես նստել, արի դու էլ մասնակցի:

Ես փորձում էի ամեն կերպ հրաժարվել, չմասնակցել, բայց չստացվեց... Ես վեր կացա «պարտված մարտիկի» նման և միացա ընկերներին: Մենք ապագա մուլտ հերոսի կերպարներն էինք և փորձում էինք ընդունել այն դիրքերը և լուսանկարվել, որոնք հետո իրար

միացնելով, պիտի ստացվեր շարժում, ու կյանք տար մեր ֆիլմին: Ինձ ամեն ինչ այնքան շատ դուր եկավ... Ես

ստեղծեցի իմ աշխարհը, ու հիմա կարող եմ ասել, թե ինչ է pixilation-ը:

Մանե Մ. Սարգսյան



Լուսանկարը՝ Գոնթան Բաղդասարյանի



Լուսանկարը՝ Դիանա Շահբազյանի

Մոնտաժ, մոնտաժ, մոնտաժ

Երբ դեռ չգիտեի, թե իրենից ինչ է ներակայացնում մոնտաժը, ինձ թվում էր՝ դժվար բան չկա. մի երկու ժամ կնստեմ համակարգչի դիմաց և վերջ:

Բայց, երբ արդեն սկսեցի սովորել, հասկացա, որ նկարահանումները ֆիլմ ստեղծելու ավելի հեշտ փուլն է: Մոնտաժի փուլը շատ ավելի դժվար է. այն պահանջում է համբերություն, աշխատանք և ուշադրություն, իսկ եթե այս հատկությունները չունես, ավելի լավ է մոնտաժ չանես:

Առավոտյան, երբ քննարկում էինք նկարահանումները, պարոն Արան և Միլիցան մեզ բոլորիս ասում էին մեր սխալները և հիմնական կանոնները, որոնք պարտադիր են ֆիլմ նկարելու համար: Օրինակ, տեսախցիկը պետք է շտատիվի վրա դնել, որպեսզի անշարժ լինի, ու կադրը ստացվի. հակառակ դեպքում պիտանի չի լինի նկարածո: Կամ ուշադիր լինենք այն պահին, երբ հերոսները խոսում են, ցանկալի է հարցազրույցը վերցնել այնպիսի տեղում, որտեղ կողմնակի ձայները չեն խանգարի: Յետո նկարելուց ուշադիր լինենք, որ մարդուն, ում նկարում ենք, նորմալ երևա, ոչ թե գլուխը կիսատ: Կամ աշխատենք հնարավորինս քիչ «զուր» անել. «զուր» փչացնում է կադրի որակը: Երբ այս ամենը ասվում էր, բոլորիս թվում էր՝ մեզանից ոչ մեկը այս սխալները չի արել, և բոլորս հաստատ շատ լավ ու ճիշտ էինք

նկարել:

Բայց երբ սկսվեց մոնտաժի փուլը, և մենք առանձնացնում էինք պիտանի և ոչ պիտանի կադրերը, հասկացանք, որ այդ սխալները բոլորս էլ թույլ էինք տվել: Մի տեղ մարդու ձայնի փոխարեն միայն քանու ձայն էր լսվում, մի տեղ կադրը թրթռում էր, մյուսի մեջ մարդը կիսատ էր երևում... Յետո մենք ինքներս մեզ խոստացանք, որ էլ երբեք չենք անի այդ սխալները:

Ամբողջ օրը անցկացնելով համակարգչի դիմաց՝ միայն հասցրինք ընտրել, թե որ կադրերն են պիտանի, իսկ որոնք՝ ոչ:

- Սուրե՛ն, հազար անգամ ասեցի, էդքան արագ առաջ մի տուր:

-Լավ էլի, Լիլի՛, չե՞ս տեսնում, որ

կադրը փչացած է:

Մեր այս երկխոսությունը պարտաճանաչ կերպով հնչում էր ամեն կադրը նայելուց առաջ:

-Ասա՛, երեք ժամ փչացած կադրը նայում ես, հետո ասում, որ անհաջող էր ստացվել ու ջնջում: Դե միանգամից ասում եմ էլի՛ էս կադրը պետք չի:

- Սուրե՛ն ջան, դու հո Նոստրադամուսը չե՛ս, ի՞նչ գիտես, մեկ էլ տեսար՝ վերջում շատ հաջող կադր ենք գտնում:

Եվ այսպես անընդհատ: Մեկ էլ հանկարծ ներս մտավ ընկեր Արան, և մենք երկուսով միանգամից.

-Ընկե՛ր Արա, բա էս լավ կադր չի՞:

Իսկ հետո, երբ արդեն հավաքել ես բոլոր պիտանի կադրերը, սկսվում է ընտրությունը այդ կադրերի միջից: Նայելու ընթացքում, երբ շատ լավ կադր է հայտնվում և երբ նամանավանդ պարոն Արային նույնպես դուր է գալիս...

-Էս կադրը ես եմ նկարել:

-Տո՛, ոնց ես դու նկարել, դու այդ ժամանակ կովերին էիր նկարում:

-Վա՛յ, ես կով չեմ նկարել, էս կադրը իմն ա:

Մեկ էլ հանկարծ ներս է մտնում Լուսինեն և ասում.

-Էրեխե՛ք, հանգստացե՛ք, դուք էս ժամանակ էնտեղ չէիք, էս ես եմ նկարել...

Լիլի Նալբանդյան



Լուսանկարը՝ Դիանա Շահբազյանի

Լուսանկարը - Հովհան Բարդաթարյանի



Սերբական տեսակետ

Ինչպես մեկը, ով այցելում է Հայաստան առաջին անգամ, պիտի ասեմ, որ ես զարմացած էի ոչ միայն այս երկրի գեղեցկությունից, այլ նաև հրաշալի հյուրընկալությունից: «Մանանայի» հյուրընկալները չունեին ոչ մի սահմանափակում: Ես աշխատել եմ շատ որբշուփերում, բայց այս մեկը ինձ համար լավագույնն էր աշխատանքի և հաճույքի տեսանկյունից:

Կարծ ժամանակը և լեզվական խոչընդոտները չխանգարեցին մեզ հաղորդակցվել միմյանց հետ, սովորել միմյանցից և հրաշալի դրկումենտալ ֆիլմեր պատրաստել: Ծովինարի և Լիլիթի օգնությամբ՝ որպես թարգմանիչներ, մենք կարողացանք հեշտությամբ աշխատել:

Ինձ համար այս տեսակ ուսուցումը շատ կարևոր էր: Ես խորապես հավատում եմ, որ լավագույն տեղը փոփոխություններ սկսելու, երիտասարդների կրթության ոլորտն է: Եվ ոչ միայն դա: Նրանց գործիքներ տալը, սովորեցնելը ինչպես օգտագործել իրենց ծայրը մեդիայի միջոցով, ամենալավ մասն է այս տեսակ ուսուցման: Երիտասարդների հզորացումը էությունն է ավելի լավ աշխարհի: Մեդիան ոչ միայն պարզապես գործիք է, այլ նաև ստեղծագործական ինքնարտահայտում, որը սնում է միտքը և հոգին:

Մասնակիցները անշուշտ սովորեցին ինչպես աշխատել թիմում, ինչպես գործ ունենալ կոնֆլիկտի

հետ, սովորեցին ուրիշ մշակույթների, կյանքի տարբեր ձևերի մասին: Այս տեսակ հավաքները ընդլայնում են մտահորիզոնը:

Ես ղեկավարն էի մի ֆիլմի, որը հայ-սերբական համագործակցության մասին էր: Ինձ հետ էին նաև Շուշանը, Դավիթը, Հովհանը և Դիանան: Չնայած որբշուփը տևեց 7 օր, մենք ունեինք միայն 4 օր՝ ֆիլմեր պատրաստելու համար: Ժամանակի մնացած մասը լի էր կազմակերպված էքսկուրսիաներով, հանդիպումներով, որոնք հարստացրին իմ պատկերացումները Հայաստանի մասին և որի համար ես անչափ շնորհակալ եմ: Ես շինությունների մեծ երկրպագու չեմ, այսպիսով բնությունն այն բանն է, որը ես ցանկանում եմ տեսնել, երբ ինչ-որ տեղ եմ ճանապարհորդում: Լեռները, տարբեր դարաշրջանների եկեղեցիները (ներառյալ մեկը 4-րդ դարի), քոչվորները, որոնց ես մինչև այժմ տեսել էի միայն «Նեյշնալ ջեոգրաֆիկ» ամսագրերում, ինձ շնչակտուր էին արել: Դա մի բան է, որ ես կպատմեմ իմ ընկերներին, բայց ես գիտեմ, որ չեմ կարող փոխանցել այն, ինչ ապրել ու տեսել եմ իմ սեփական աչքերով:

4 օրվա ընթացքում դրկումենտալ ֆիլմ պատրաստելը մեծ մարտահրավեր էր, և դա լուրջ աշխատանք է պահանջում, մեծ ոգեշնչում և բախտ: Անշուշտ, մենք այդ ամբողջն ունեինք: «Մանանայի» աշխատակազմը կարողանում էր շատ արագ և լավագույն կազմակերպել նկարահանման համար անհրաժեշտ ամեն բան. գտնել մարդկանց,

պայմանավորվել և այլն: Ես կարող եմ ասել, որ ես հպարտ եմ բոլոր նրանցով և այն աշխատանքով, որ նրանք արել են, և շնորհակալ եմ յուրաքանչյուրին, ով օգնեց մեզ:

Եվ վերջում ես կարող եմ միայն ասել, որ հույս ունեմ՝ մի օր հետ կվերադառնամ...

Միլիցա Միհայովիչ Մեդիա կրթական կենտրոն Սերբիա



Լուսանկարը՝ Դիանա Շախբազյանի



Վարպետության դասը վարում է լրագրող Ռուզան Խաչատրյանը

«Ծիծաղս եկավ, երբ օվկիանոսի այն կողմից նախկին մի հայաստանցի գրեց. «Լեզենդար լրագրող ես, ուզում եմ հետո «սքայփոլ» խոսել»: Յոպ, ես երեխա չեմ, ոչ ոք լրագրողին այդպիսի շոյալ հաճոյախոսություն չի անում հենց այնպես. դրա համար առնվազն պիտի մեռած լինես, չնայած, դա էլ երաշխիք չէ:

«Սքայփոլելուց» հետո, երբ հասկացա, որ ծիշտ էի, որոշեցի գիրք գրել սկանակների համար, որպեսզի լրագրողական փորձի տասնյակ տարիներ չծախսեն ինձ պես՝ տարրական բաները հասկանալու համար»:

Սա մի հատված է լրագրող Ռուզան Խաչատրյանի «Սկանակ լրագրողի գրքից», որը վերջերս է լույս տեսել և նախատեսված է լրագրության մեջ առաջին քայլերն անող երիտասարդների համար:

Ի՞նչ կրթություն եք ստացել:

-Ես Երևանի համալսարանի բանասիրական ֆակուլտետում եմ երեք տարի սովորել: Արդեն ժուռնալիստիկայի մեջ մասնագիտանում էի, բայց տեղափոխվեցի Մոսկվայի պետական համալսարան: Երևանում չկար ժուռնալիստիկայի ֆակուլտետ, որովհետև կոմունիստական երկրներում համարում էին, որ

պիտի իրենց ձեռքի տակ լինի ժուռնալիստիկայի ֆակուլտետը, քանի որ ժուռնալիստիկան համարում էին կարևոր քարոզչական մասնագիտություն:

-Որտե՞ղ եք աշխատել:

-Թերթերում եմ աշխատել՝ «Ազգ», «Երկիր», «Ար» (հիմա գոյություն չունի այդ թերթը): Հետո աշխատել եմ «Ազատություն» ռադիոկայանում՝ ամենատեղաբար, հիմա Հանրային ռադիոյում էլ եմ աշխատում և հեռուստատեսություններից աշխատել եմ «Կենտրոն», «Հանրային», «Շանթ», հիմա՝ «Երկիր Մեդիա»-յում: Մի խոսքով, գրեթե բոլոր տեղերում: Եվ ասեմ, հետաքրքիր է մեկից մյուսն անցնելը:

-Երբ և ինչո՞ւ որոշեցիք գրել «Սկանակ լրագրողի գիրքը»:

-Դե, ես միշտ մտածում էի, որ մի քիչ փորձ ձեռք բերեմ, երևի անպայման իմ փորձը կփոխանցեմ սկանակ լրագրողներին: Մի տեսակ մասնագիտություն ես, որ կուտակվում է: Ինչպե՞ս են տատիկներն ու պապիկները սիրում ասել. սա այսպես արա, մա այսպես արա: Այդպես էլ մասնագիտության մեջ է: Երբ այդքան կուտակվում է, դու ուզում ես անպայման փոխանցել:

Ես հաճախ էի տեսնում, թե ինչ հեշտ է անփորձ լրագրողին մոլորեցնելը: Ու մտածեցի, գրքում գրել եմ այդպես, որ ինչու ես 20, 30, 40, չէ 40 դեռ չկա, այսքան տարի պիտի փորձ ձեռք բերեմ, մոր այդ բաները հասկանամ, թող

միանգամից, այն, ինչ ես այսքան տարիներում եմ ձեռք բերել, մոր սերունդը շուտ իմանա: Ես իրենց ասեմ արդեն այն գաղտնիքները, ինչ ես իմ փորձի ընթացքում եմ բացահայտել:

-Ի՞նչ հատկություններ ու գիտելիքներ են պետք լրագրող դառնալու համար:

-Գիտելիք ամբողջ կյանքում կարող եք ձեռք բերել: Լրագրողը պիտի ամեն ինչ էլ իմանա: Իսկ հատկանիշներից մեկը լեզվական ունակություններն են: Ծիշտ է, մեկին դա տրվում է ի ծնե, մյուսին մի քիչ դժվարությամբ, բայց այդ ունակությունները գիրք կարդալով կարելի է զարգացնել: Ինչքան շատ կարդաք, լեզվին շատ տիրապետեք, ձեզ համար այդ պատմելու հատկանիշը խաղ ու պար կդառնա: Երկրորդ հատկանիշը, դա իմ սուբյեկտիվ կարծիքն է, որ մա, ով փոքր հասակից սովոր է սուտ խոսել, ուռձացնել, այդպիսի մարդը չեմ կարծում, որ պիտի գնա լրագրություն: Կարծես փորձարկում արած լինեմ իմ շրջապատի մարդկանց, իմ շրջապատի լրագրողներին՝ ով սովորություն ունի մի քիչ ուռձացնելու, ինքն իր մյուսների մեջ էլ է անում դա:

Ուրեմն չատել, լեզու իմանալ և շատ տեղեկացված լինել՝ անընդհատ պիտի սովորեք, անընդհատ կարդաք ամեն ինչի մասին: Նշանակություն չունի, որ բնագավառը, որովհետև լրագրողին ամեն բանը մեկ էլ հանկարծ աշխատանքի պահին պետք է գալիս: Ոչ թե համակարգչի առջև աշխատելիս, այլ տեղում աշխատելիս: Համակարգչի առջև դուք կարող եք փորփրել, գտնել:

-Եթե հնարավորություն ունենայիք Ձեր մասնագիտությունը նորից ընտրելու, ի՞նչ կընտրեիք:

-Ուրիշ բան, չէ, չեմ կարող անել, քանի որ շատ-շատ եմ խորացել: Երևի իմ էության մեջ էլ է, որովհետև կյանքը լրիվ ուրիշ է դառնում, դու քնում-արթնանում ես, քո ուղեղում թեմաներ են, դու մայրում ես կյանքին լրիվ ուրիշ աչքերով, բզիկներով մոյմիսկ: Որ հանկարծ ես տանը մտածեմ, դրսում մի աղմուկ է լինում, ինձ պիտի դուրս գցեմ: Չգիտեմ, դա ի ծնե է, թե լրագրությունից է, բայց իմ երեխաները դա բզիկ են անվանում, ասում են. -էլի պիտի գնաս, իմանաս՝ ի՞նչ է եղել, անհարմար է, մեծ կին ես, մտիր տանը:

-Ընթերցողը ավելի շատ համացանցի նյութերն է կարդում, թե՞ թերթի:

-Իհարկե համացանցի: Նախ, թերթերի տպաքանակները

Հայաստանում ահավոր քիչ են, անկախ այն բանից, որ ամբողջ աշխարհում տպագիր մամուլը ձգնաժամ ապրեց ինտերնետային մեդիայի պատճառով, տպաքանակները փոքրացան, հետաքրքրությունն արդեն տպագիր թերթի հանդեպ պակասեց:

-Քանի որ ինտերնետով լուրերն ավելի արագ են տարածվում, Ձեր կարծիքով թերթերն այլևս լույս չեն տեսնի:

-Դուք տվեցիք միլիոն դոլարանոց հարց: Գիտե՞ք դա ինչ է. դրա պատասխանն ով գիտի, իրեն շատ մեծ նվեր է սպասվում, որովհետև ամբողջ աշխարհը հիմա մտածում է՝ մեռնո՞ւմ են թերթերը, թե՞ ոչ: Ես չգիտեմ որևէ թերթ, որը ինտերնետային կայք չունենա, ու իրենք մտածում են՝ ինչպե՞ս գտնել, ի՞նչ եղանակ, ի՞նչ մեթոդ, ի՞նչ նյութեր, ի՞նչ թեմաներ, որ մարդիկ ինտերնետով կարդան լուրերը, բայց մյուս օրն առավոտյան կամ երեկոյան (աշխարհում կան նաև երեկոյան լույս տեսնող թերթեր), առնեն թերթը, կարդան: Հիմա ոչ մի բան չի գտնվել, գուցե դուք այնպիսի լավ, խելոք սերունդ եք, որ դուք ձևը գտնեք, թե ինչով կարող են թերթերը ինտերնետային լուրերի հետ մրցակցել:

-Կամ համացանցում գրաքննություն:

-Ոչ, համացանցն ավելի ազատ է, քան թերթերը, քան հեռուստատեսությունները, քան ռադիոկայանները, որովհետև ինտերնետում մի քիչ ավելի դժվար է վերահսկելը: Եթե դուք նայեք, մույնիսկ հայաստանյան մեդիայում, հեռուստատեսությունից, ռադիոյից, տպագիր թերթերից ավելի ազատ է ինտերնետը:

-Եթե ընթերցողը կարդա Ձեր գիրքը և հետևի Ձեր խորհուրդներին, ապա կդառնա լավ լրագրող:

-Լրագրությունը գրքով չեն սովորում, ես հենց այդտեղ վերջում գրել եմ: Դա այնպես չէ, էլի, որ նստես, կարդաս որևէ գիրք, դառնաս լրագրող: Հիմա ես եկել ձեզ սովորեցնում եմ, ոչ: Դուք գնում եք դուրս, ինչ որ բաներ եք անում, գալիս եք, նյութերը պատրաստում եք: Ամեն անգամ մի նոր սայթաքում եք ունենում, հասկանում եք, շտկում եք: Ես չեի կարող իմ գրքում գրել այնպիսի պահեր, որոնց դուք հանդիպում եք ձեր ամենօրյա իրադարձությունը լուսաբանելիս: Դուք պիտի տեղում աշխատեք, որովհետև տեղում, նախ

հարցեր են առաջանում ձեր մեջ, հակասություններ կան, նախ դուք տեսնում եք բաներ, որոնք տեղում պիտի ծշտեք: Լրագրությունը պարզ, հասկանալի և ճշգրիտ պատմելու արվեստն է:

-Ձեր գրքի շապիկին գրված է, որ դուք աշխատել եք Մյունխենում, Պրահայում: Ինչո՞վ է տարբերվում հայ լրագրությունը և դրսի լրագրությունը, և հայ լրագրողը՝ դրսի լրագրողից:

-Ես հայ լրագրող եմ, ճիշտ է, «Ազատություն» ռադիոկայանը ամերիկյան ռադիոկայան է, Մյունխենում այդ առիթով եմ եղել, Պրահայում էլ այդ առիթով եմ եղել ու Երևանում շարունակել եմ, լուսաբանել եմ հիմնականում Հայաստանի իրադարձությունները: Եվ աշխատել եմ Արևմտյան ստանդարտներով, որովհետև դա պահանջում էր «Ազատություն» ռադիոկայանը: Լավ կլիներ, Հայաստանի ամբողջ մեդիան, աշխատեր այդ ստանդարտներով՝ անկողմնակալություն, օպերատիվություն, անկաշառություն, բազմակողմանիություն և այլն: Եթե դուք ձեզանով չզբաղվեք, եթե գիտելիքներ չունենաք, չեն հետևի ձեզ: Կներեք, ես կարող եմ մտնել համացանց, լիքը գեղեցիկ դեմքեր տեսնեմ, բայց եթե չկա զլխի մեջ, ես չեմ հետևի իրեն: Այնպես որ, ինչքան կարող եք, կարդացեք:

-Լրագրողների համար չգրված օրենքներ կան:

-Իհարկե: Բայց շատ չկաղապարվեք կանոնների մեջ, որովհետև, նախ բոլոր լրագրողները

տարբեր հարցերում տարբեր մոտեցումներ ունեն: Մի մտածեք, որ մեզանից որևէ մեկը վատ լրագրող է կամ պակաս լրագրող է, պարզապես կան հարցեր, որոնց շուրջ մինչև հիմա էլ աշխարհի բոլոր լրագրողները միակարծիք չեն: Բայց նաև անընդհատ օրիգինալ լինելու, անընդհատ կանոններ ջարդելու մոլուցքն էլ է սխալ: Ասենք, Յեմինգուեյը մի անգամ լրագրողական գործեր գրելիս ասուլիսում մարդկանց կոշիկներն է միայն նկարագրել, բայց ամեն անգամ ասուլիս գնալիս կոշիկ չի լինի նկարագրել: Ու հետո, եթե դուք ամենատարրական կանոնները չիմանաք, կանոն ջարդելու մասին մի՛ մտածեք: Չգրված կանոնները դա վարքականոնն է: Ամեն լրատվամիջոց իր վարքականոնը մշակում է, բայց կան էլի համընդհանուր կանոններ, վարքականոններ, օրինակ, որ մարդուն չի կարելի վիրավորել, մարդու անձնական, ֆիզիկական թերությունները չի կարելի ծաղրի առարկա դարձնել և այլն: Ամեն մարդ նաև ինքն իր համար չգրված կանոններ ունենում է, բացի այն կանոնները, որ լրատվամիջոցը մշակում է:

Հարցազրույցը վարեց Անի Զիլավյանը

Լուսանկարները՝ Զոֆան Բաղդասարյանի



Մարիա Մոնթեսորիի հիշեցում-պատվիրանները ծնողներին

Համարվում է, որ 20-րդ դարում մանկավարժության ոլորտում հեղափոխություն են կատարել ընդամենը չորս մանկավարժներ՝ ամերիկացի Զոն Դյուին, գերմանացի Գեորգ Կերշենշտեյները, իտալուհի Մարիա Մոնթեսորին և սովետական մանկավարժ Անտոն Մակարենկոն:

Մարիա Մոնթեսորին ձևակերպել է համառոտ հիշեցում-պատվիրաններ ծնողների համար: Դրանք պարզ են, սակայն երբ խորը մտածում ես, ապա մի քանի բառի մեջ ամփոփված է բազմահատոր իմաստություն:

Յուրաքանչյուր ծնող տարվա մեջ գոնե մի անգամ պետք է վերընթերցի այս պատվիրանները: Այդ դեպքում երեխա-ծնող փոխհարաբերությունները կարող են որակական նոր հարթություն բարձրանալ, իսկ երեխան կմեծանա ավելի ներդաշնակ և զարգացած:



Լուսանկարը՝ Օֆելյա Կիրակոսյանի

Երեխային սովորեցնում է այն, ինչ շրջապատում է իրեն:

Եթե երեխային հաճախ են քննադատում, նա սովորում է դատապարտել:

Եթե երեխային հաճախ են գովում, նա սովորում է գնահատել:

Եթե երեխայի հանդեպ թշամական վերաբերմունք են ցույց տալիս, նա սովորում է կռվել:

Եթե երեխայի հետ ազնիվ են, նա սովորում է արդարամիտ լինել:

Եթե երեխային հաճախ են ծաղրում, նա սովորում է երկչոտ լինել:

Եթե երեխան ապրում է անվտանգության զգացումով, նա սովորում է հավատալ:

Եթե երեխային հաճախ են

խայտառակ անում, նա սովորում է իրեն մեղավոր զգալ:

Եթե երեխային հաճախ են խրախուսում, նա սովորում է իր հանդեպ լավ վերաբերվել:

Եթե երեխայի հանդեպ հաճախ են ներողամիտ լինում, նա սովորում է համբերատար լինել:

Եթե երեխային հաճախ են քաջալերում, նա ձեռք է բերում հավատ իր ուժերի նկատմամբ:

Եթե երեխան ապրում է բարեկամական մթնոլորտում և իրեն կարևոր է զգում, նա սովորում է սեր գտնել այս աշխարհում:

Երեխայի մասին վատ մի արտահայտվեք ոչ նրա ներկայությամբ, ոչ էլ առանց նրա:

Կենտրոնացեք երեխայի մեջ լավը զարգացնելու վրա, այնպես որ, արդյունքում վատի համար տեղ չի մնա:

Միշտ լսեք և պատասխանեք երեխային, որը դիմում է ձեզ:

Հարգեք երեխային, որը սխալ է գործել և կարող է հիմա կամ մի քիչ ավելի ուշ ուղղել իր սխալը:

Միշտ պատրաստ եղեք օգնել այն երեխային, ով որոնումների մեջ է, և աննկատ լինել այն երեխայի համար, որը արդեն ամեն բան գտել է:

Օգնեք երեխային յուրացնել նախկինում չյուրացրածը: Արեք դա՝ շրջապատող աշխարհը լցնելով հոգատարությամբ, զսպվածությամբ, լուրջությամբ և սիրով:

Երեխային միշտ դիմեք ամենաբարեկիրթ եղանակով, առաջարկեք նրան այն լավագույնը, ինչը կա ձեր ներսում:



Լուսանկարը՝ Տաթև Խաչատրյանի, 17տ.



Լուսանկարը՝ Լիլիթ Կարապետյանի

Չարքեր, որոնք հուզում են մեզ

«Մտքերդ հավաքի՛ր, գրիչդ վերցրու ու սկսիր գրել նոր նյութդ,- մենախոսում եմ ես,- մի՛ մտածիր, գուցե այս անգամ ստացվի, այս անգամ հավանես գրածդ,- շարունակում եմ, տետրս բացելով»:

Վերջերս, ամեն անգամ նյութ գրելիս պետք է երկար տրամադրվել և փորձել, քանի որ, ինքս էլ չգիտեմ, թե ինչու դժվարությամբ է հիմա ստացվում գրելը, և գրեթե ոչ մի անգամ արդյունքը դուրս չի գալիս: Ու ամենաշատն ինձ հուզում է, թե ի՞նչն է իմ ստեղծագործական ճգնաժամի պատճառը: Ցավոք, չեմ կարողանում հասկանալ: Ինչ թեմա էլ լինում է, միևնույն է, ինձ թվում է, որ այդ հարցի շուրջ գրել ոչինչ չի լինի և անհմաստ կլինի, բոլոր մտքերս մի վայրկյանում դատարկվում են, բացի մեկից՝ «Միևնույն է, չես կարողանալու լավ նյութ գրել»: Այդ մտքին հաջորդում են մյուսները՝ «Ախր, ինչո՞ւ չեմ կարող, միշտ էլ կարողացել եմ, կստացվի, հիմա կապացուցեմ, որ կստացվի», բայց թեմայի վերաբերյալ ոչ մի միտք չի գալիս, և երկար նստում եմ տետրս բաց, գրիչս ձեռքս, մտքերում՝ խառնաշփոթ: Երկար դադարից հետո երբեմն ստացվում է լավ խորհել թեմայի շուրջ և ինչ-որ նյութ գրել, երբեմն էլ՝ ոչ: Անգամ, երբ մտածում եմ ազատ թեմայով նյութ գրելու մասին, բոլոր թեմաները և մտքերը միանգամից դատարկվում են կամ էլ անհետաքրքիր թվում:

«Ամեն ինչ անցողիկ է»,-

հանգստացնելով ինքս ինձ, փակում եմ տետրս, որի թերթի մաքրությանը խանգարում է միայն չզրված նյութի վերնագիրը:

Չարքեր, որոնք հուզում են ծնողներից

-Չգիտեմ, թե այսօր ինչ եմ եփելու,- լսեցի մայրիկիս ծայնը՝ մտնելով խոհանոց:

-Մի բան եփիր,- ասաց պապիկս:
 -Չեշտ ես ասում, մեզ ի՞նչ կա, ամեն ինչ էլ ուտում ենք, երեխաներն են հարցը՝ ամեն ինչ չի, որ ուտում են: Մեկը մի բանը սիրում ա, մյուսը՝ չէ: Լավ եկար,- շարունակեց մայրիկս նայելով ինձ, -ի՞նչ կուզեք՝ եփեմ:
 -Եսիմ,- կարճ պատասխանեցի ես:
 -Դե գոնե որոշ տարբերակներ ասա, որոշեմ: Օրինակ, հավի միսը ջեռոցում, եփած, ճաշի մեջ, թե՞ տապակած: Չետմ էլ՝ փլավ:
 -Ինձ՝ մեկ ա:
 -Եղբորդ հետ խորհրդակցիր, արի, ասա:
 -Լավ,- ասացի ես ու քայլեցի դեպի սենյակ, որպեսզի այդ կարևոր հարցին լուծում գտնեմք: Ճանապարհին մտածում էի, թե ինչքան դժվար է ամեն օր մտածել, թե ինչ եփել, երբ ուտողները իմ և եղբորս նման ամեն ինչ չէ, որ ուտում են: Ինչքան դժվար է ամեն անգամ մի նոր ճաշատեսակ գտնել կամ մտածել, որպեսզի չհոգնեմք ուտելիքից: Ինչքան դժվար է, երբ ես ու եղբայրս ի վերջո նույն հայտարարի չենք գալիս, և ամեն մեկիս համար մայրիկն առանձին բան է պատրաստում: Մտնելով սենյակ և

նայելով եղբորս՝ ուղղեցի նրան այդ ճակատագրական հարցս:

-Երևի հավի մսով ճաշ,- պատասխանեց նա:
 -Է~, իսկ եթե տապակա՞ծ հավ,- առաջարկեցի ես, չհավանելով նրա պատասխանը:

Մի քանի րոպե ամեն մեկն առաջարկում էր իր տարբերակը և համոզում, թե ինչու հենց այն: Ի վերջո գալիս ենք մի հայտարարի, և ես վերադառնում եմ խոհանոց, որ ասեմ մայրիկին, թե ինչ է եփելու: Մեր որոշումն ասելուց հետո մայրիկը կրկին դիմում է ինձ.

-Դե, դա ճաշի համար, բա հիմա ի՞նչ կուտեք:

-Չիմա՞,- զարմանում եմ ես,- եսիմ: Դժվար բան ես ասում: Մի մտածիր, մի բան կուտենք, հիմա սոված չենք,- ասում եմ ես արագ ու դուրս գալիս խոհանոցից, մտածելով, որ տատիկիս հայրը ինչ-որ տեղ ճիշտ էր ասում, որ լավ կլիներ, եթե մարդիկ ստեղծեին այնպիսի հաբեր, որոնք խմելիք կամ ծամելիք և կշտանային: Այդպես իսկապես, իմ կարծիքով, և՛ մեզ ավելի հեշտ կլիներ, և՛ մայրիկներին:

Անի Զիլավյան, 16 տ.



Լուսանկարը՝ Օֆելյա Կիրակոսյանի

Հայրիկս ու ես

-Պա՛պ, ո՞նց ես,- մոտեցա հայրիկիս և նրա այտին «պոնջիկ» արեցի:

-Լավ եմ, Գոգլի: Դո՞ւ:

-Ես էլ,- ժպտալով ասում եմ ես և թխելով նրա մեծ ձեռքին, անցնում եմ իմ սենյակ:

Իմ ու հայրիկիս միջև միշտ եղել են այսպիսի ընկերական հարաբերություններ և միգուցե նրա պատճառով, որ դպրոց հայրիկս է տանում, դպրոցից հայրիկս է բերում: Շատերը ասում են, որ ես ու հայրիկս իրար շատ նման ենք, բայց ես մտածում եմ, որ նման եմ միայն մեր ժպիտները և աչքերի ձևը ծիծաղելուց:

Փոքր ժամանակ, երբ պետք է գնայի քնելու, և երբ դեռ հայրիկս

ննջասենյակ գնացած չէր լինում, ես ասում էի.

-Պա՛պ, արի գրկի, տար ինձ քնեցնելու:

Եվ ես գնում էի, կանգնում էի բազկաթոռի վրա, իսկ հայրիկս՝ դրա մոտ: Ապա ես ոտքերս դնում էի նրա գոտկատեղին, ձեռքերովս էլ պինդ գրկում էի նրա վիզը: Եվ երբ հասնում էիմք իմ անկողնու մոտ, ես համբուրում էի նրան և իջնում, պառկում քնելու: Ապա երբ վերմակով ծածկվում էի, ասում էի.

-Դե, ինձ փաթեթավորի:

Հայրիկս վերմակը դնում էր մեջքիս, ոտքերիս տակ և վերջում էլ ասում.

-Վերջ, հիմա կարանք «բանտիկ» կապենք ու տանենք նվեր:

Բայց երբեմն լինում էր այնպես, որ

պառկելուց հետո ես տեղիցս վեր էի թռչում ու գնում իմ «գործերով», իսկ երբ հայրիկս ինձ տեսնում էր, ասում էր.

-Վերջ, էլ քեզ չեմ բերելու:

Բայց միննույն է, մյուս երեկո նա էլի ինձ բերում էր քնեցնելու: Նաև առաջին դասարանից մինչև հիմա պայուսակա տալիս եմ հայրիկիս տուն գնալուց, որովհետև պայուսակա ծանր է, իսկ ես՝ հոգնած: Եվ քանի որ փոքր ժամանակ իմ բոլոր պայուսակները վարդագույն էին, սեպտեմբերի սկզբին հայրիկս ինձ ասում էր.

-Մանու՛շ, ի՞նչ կլինի, մի քիչ մուգ գույներով պայուսակ առ, որ աղջկական չէրևամ:

Եվ վերջապես նրա երազանքը այս երկու տարվա ընթացքում իրականացավ, իմ պայուսակը կանաչ երանգով է: Բայց դեռ շատ է լինում, որ հայրիկս պետք է մի փոքր «աղջկական» բաներ ամի: Օրինակ, մի անգամ, երբ պետք է գնայի պարի մրցույթի, առավոտից պատրաստվում էի: Մայրիկս դեռ քնած էր, և որպեսզի նրան չարթնացնեմ, դիմեցի արդեն արթնացած, հեռուստացույց դիտող հայրիկիս:

-Պա՛պ, «մանիկյուր» կքսե՞ս: Ախր, էս աջ ձեռքս չեմ կարում քսեմ, է:

Երկար համոզելուց հետո հայրիկս արեց դա:

Ինչպես նկատեցիք, հայրիկս ինձ շատ հաճախ ասում է «Գոգլի», իսկ երբեմն էլ՝ Մանուշ: Մանուշ ասում է այն ժամանակ, երբ ուզում է, օրինակ, տնայիններս ստուգել կամ ուզում է, որ ինչ-որ բան ամեն: Կամ էլ՝ երբ պարից հոգնած զալիս եմ, միանգամից փռվում եմ բազկաթոռին և դեռ երկի մեկ ժամ ոչինչ չեմ անում և միայն ժամանակ առ ժամանակ ասում եմ.

-Վայ, հոգմեցի: Ոտքերս ցավում են:

Իսկ հայրիկս էլ այդ ժամանակ ասում է.

-Դե, որ հոգնում ես, պիտի պարից հանեն քեզ, այ Մանուշ:

Եվ մենք երկուսս էլ սկսում ենք ծիծաղել: Նա պնդում է, որ ինձ պարից կհանի, իսկ ես ասում եմ, որ դա պետք է իմ ուզելով լինի:

Սիրում եմ հայրիկիս, նա աշխարհի ամենալավ հայրիկն է:

Գոհար Կարախանյան, 13 տ.



Լուսանկարը՝ Հերմինե Հարությունյանի, 14տ.

Մենք ապրում ենք Ջողում

Ես ապրում եմ Արարատի մարզի Ջող ավանում: Ջողում մարդկանց մեծ մասը մնացել է առանց աշխատանքի: Շատերը գնացել են արտերկիր աշխատելու, որպեսզի իրենց ընտանիքը պահեն, մյուսները տանը մատել են և սպասում են: Իմ հայրը նույնպես արտերկրում է: Ես շատ եմ կարոտում իմ հայրիկին, բայց դա ոչինչ չի փոխում: Նա գալիս է Հայաստան ամենաշատը մեկ ամսով: Ես չեմ հասցնում կարոտս առնել: Հայրիկս աշխատում է Ռուսաստանի Դաշնությունում: Հայաստանում նա տաքսու վարորդ էր աշխատում, հետո գրասենյակը փակեցին, և նա գնաց արտերկիր աշխատելու: Հայրս արդեն հինգ տարի է գնում-գալիս է, բայց այստեղ աշխատանք չկա, որ աշխատի:

Ջողում չկան ժամանցի վայրեր, չենայած, որ լինեին էլ, վատահ կարող եմ ասել, որ ոչ ոք չէր գնա: Այստեղ հարց է առաջանում՝ ինչո՞ւ: Որովհետև այդ սրճարանները գումարով են լինելու: Հետևաբար մարդիկ չեն կարողանա գնալ ամեն օր, քանի որ գումար չունեն, իսկ ինչո՞ւ գումար չունեն, որովհետև աշխատանք չկա, իսկ ինչո՞ւ աշխատանք չկա... Այդ հարցին ես անզոր եմ պատասխանել: Ինքս էլ կցանկանայի, որ Ջողում շատ լինեն աշխատատեղերը: Ասեմ ավելին, Ջողում կա մի կիսակառույց դպրոց, որը այդպես էլ չկառուցվեց, ու կասկածում եմ, որ երբևէ կկառուցվի: Շենքի հիմքը սխալ է դրված՝ ճահճի վրա: Ու եթե շարունակեն կառուցել, շենքը կփլվի:

Զգիտեմ, այդ անտեսվածության պատճառով է, թե չէ, բայց մայրուղու վրա էլ անգամ ցուցանակ չկա, որ մոտակա բնակավայրը Ջողն է: Հաճախ մարդիկ հարցնում են, թե որտեղ է Ջողը: Մեկ-մեկ մտածում եմ, որ հենց ցուցանակը հայտնվի, Ջողում կյանքը կսկսի փոխվել:

Լիլիթ Բաղայան
Արարատի մարզ, Ջող ավան



Մենք էլ մարդ ենք

Ինձ առավելապես հուզում է քաղաքիս էկոլոգիական վիճակը: Մեր մարզում շատ են այնպիսի ձեռնարկություններ, որոնք աղտոտում են օդը: Կամ ցեմենտ են արտադրում և ամբողջ փոշին տարածում քաղաքի վրա, կամ հանքարդյունաբերական գործարաններ են, որոնք թունավոր նյութերով փորձում են հանքաքարից թանկարժեք մետաղ կորզել ու էլի թունավոր գոլորշիները մթնոլորտը աղտոտում են: Ես այս մասին այնքան էլ շատ չէի մտածում, որովհետև կարծում էի, թե այդպես էլ պետք է լիներ: Այս հարցը փոթորկեց հոգիս այն ժամանակ, երբ մեր դպրոց պետք է ամերիկացի կամավոր գար և մեր քաղաքում

ապրեր, մեզ անգլերեն սովորեցներ: Շատ էինք ուրախացել, որովհետև շատերը հնարավորություն չունեն մասնավոր պարապելու, իսկ լեզուն հիմա նույնիսկ ընդունելության քննությունների ժամանակ է պետք: Սակայն... Այն կազմակերպությունը, որը պիտի կամավոր ուղարկեր, չհամաձայնվեց մեր քաղաք կամավոր ուղարկել: Նրանք ասացին, որ մեր քաղաքի օդը չափից շատ է աղտոտված, իրենց կամավորի առողջությունը չեն ուզում վտանգել:

Իսկ մենք մարդ չե՞նք, որ ապրում ենք այստեղ: Իսկ մեր առողջության մասին ո՞վ պիտի մտածի:

Լիլիթ Այվազյան
Արարատի մարզ, ք.Արարատ

Պտույտ մը Յրագրանի թաղերուն մէջ

Արձակուրդներ էին: Աչքերս բացեցի և հասկացա, որ այդ օրվա համար առանձնապէս ոչ մի պլան չունեմ: Որոշեցի վերցնել հեծանիվս ու գնալ փոքրիկ շրջագայութեան Յրագրանի փողոցներով: Սկզբուն գրոսնում էի այն վայրերով, որտեղ անցել է մանկությունս: Կանգ առա ու սկսեցի լուսանկարել բնությունը, շինությունները: Լուսանկարելիս, երբ տարվել էի շինութեան մասին մտքերով, ականջիս տակ խռպոտ և հետաքրքրական մի ձայն լսվեց.

- Ազիզ, դու վի՛ր թոռն ես: Անմիջապէս շրջվեցի, և ուղիղ դիմացս հայտնվեց մորուքով, անատամ, ստորին ծնոտը փոքր-իմջ առաջ, սա էլ հերիք չէր, ծախ աչքն էլ կիսաբաց, ճաղատ մի ծերուկ: Մի քանի վայրկյան անշարժ կանգնելուց հետո ծերուկը շարունակեց:
- Էդ տելեվիզորը ի՞նչ ես անում: Սթափվելով պատասխանեցի.
- Պապի, պլանշետ ա: Սակայն մի որոշ ժամանակ անորոշ հայացքով նայելուց հետո ծերուկը հարցրեց.
- Պապլանշետն ի՞նչ ա:
- Դե պլանշետը սմարթֆոնի մեծ տեսակն ա:
- Յ-ա, հասկացա, բա սմարթֆորդն ի՞նչ ա:
- Դե, խելացի հեռախոս:
- Բա ես գիտեմ՝ թոռս ա խելացի, հա, ու է՛ն, ինչ եմ ասում, օլիմպիադաներ ա հաղթել:
- Չէ, պա՛պի, պլանշետս հաստատ օլիմպիադայի չի մասնակցի, բայց դե, թոռդ էլ էսպէս լավ չի կարողանա նկարել:
- Բա էդ մենակ նկարում ա՛:
- Պապի, կարող էս մարդկանց զանգել, համացանց մտնել, նկարներով փոխանակվել...
- Յասկացա, թոռս էլ դրանից ունի, գնամ՝ թող նկարներս ուղարկի Ռուսաստան՝ տղերքս ընդդէմ: Բոպեներն անցնում էին, իսկ ծերուկը ավելի ու ավելի հետաքրքրասեր էր դառնում, իսկ իմ ժամանակն անսահմանափակ չէր, այդ իսկ պատճառով եկավ հրաժեշտի ժամանակը:
- Պապի՛, ես գնամ՝ արդեն ուշ է:
- Յաջողություն քեզ, ա՛զիզ ջան:

Ճանապարհին մտքերով ապագայում էի. ինձնից երկու սերունդ փոքր երիտասարդն ինձ հետ ինչի՞ց պիտի խոսի...

Սուրեն Կարապետյան Կոտայքի մարզ, գ.Ջրառատ

Աբրահամ պապս

1826 թվին իմ նախնիները ռուս-թուրքական պատերազմի ժամանակ գաղթել են Դուբաղ քաղաքից և հասել են մինչև Թալին: Պապիկս բացատրեց, թե ինչ է նշանակում Դուբաղ: Դուբաղ նշանակում է՝ «երկու թաղամաս»: Իմ ծնողները պատմում են, որ իմ պապի պապը Թալինի հիմնադիրն է: Ծնողներս նրա պատվին են իմ անունը դրել, և ես շատ ուրախ եմ ու հպարտ: Պապիկս միշտ պատմում էր, որ իրենց գերդաստանը միշտ ուզեցել է վերադառնալ ծննդավայր: Նաև պապիկս ասում էր, որ Թալինի ջրի

համը շատ նման է Դուբաղի ջրին, և ես չէի հավատում: Վերջերս հորեղբայրս այցելել էր պապերիս երկիրը և իր հետ բերել էր Դուբաղի ջուրն ու հողը: Երբ ես խմեցի այդ ջուրը, իսկ հետո Թալինի ջուրը, հասկացա, որ պապիկս ճիշտ էր ասում, և ես զարմացա, որ Դուբաղը Թալինից այդքան հեռու է, բայց ջրերի համը նույնն է: Երևի հենց ջրի համն է ստիպել դուբաղցիներին կանգ առնել Թալինում և նոր տուն կառուցել:

Աբրահամ Աբրահամյան Արագածոտնի մարզ, ք.Թալին



Լուսանկարը՝ Լատուրա Գրիգորյանի, 16տ.



Լուսանկար՝ Դիանա Շահբազյանի

Ամռան մի օր Օձուճուճ

Առավոտյան ժամը չորսն էր: Արթնացա զարթոցիչի ձայնից: Պիտի գնայինք մոշի: Հիմնականում մոշի գնում ենք օգոստոսի սկզբից: Գյուղի գրեթե բոլոր երեխաները գնում են՝ մոշը վաճառելու նպատակով: Այս առավոտը տարբերվում էր մյուսներից, որովհետև իմ, եղբորս և ընկերուհուս հետ լինելու էին նաև այլ մարդիկ: Նրանք եկել էին Երևանից՝ «Մանանա» կենտրոնից, և ցանկանում էին տեսնել, թե ինչպես ենք մոշ հավաքում: Վատ եղանակ էր: Ամբողջ գիշեր անձրև էր տեղացել, բայց չնայած դրան՝ մենք որոշեցինք շարունակել ծանապարհը: Սկզբից գնում էինք հարթ ծանապարհով և բավականին հանգիստ: Ծանապարհի ընթացքում ես և եղբայրս պատմում էինք հետաքրքիր դեպքեր, վայրերի անվանումներ: Նախ, պատմեցինք, թե ինչ հաճելի է տեսնել, թե ինչպես են դուրս գալիս արևի առաջին ծառագայթները: Ծառագայթներից արդեն պարզ է դառնում, թե օրն ինչպես պետք է անցնի: Ասենք, եթե կարմիր են, ապա այդ օրն արևը ուժեղ պետք է լինի, եթե մի քիչ ավելի մարմնագույն, ապա մորմալ, և այդպես շարունակ: Երեխեքը զարմանում էին, երբ ասում էինք մեր տեղանունները: Ասենք՝ «Կոր քար», «Թալենի» ու նաև՝ «Ճիլ գոլ»: Հետաքրքիր է այն փաստը, որ ասում են այդ գոլը ճահիճ է և ունի իր մեջ

քաշելու հատկություն: Մոշ քաղելու ժամանակ ինձ հետ էին Հովհանն և Լիլիթը: Ու իրենք զարմանում էին, թե ոնց են մարդիկ այդքան վաղ արթնանում, բարձրանում սարեր, մոշ հավաքում, այդ ամենը նրանց համար անձանոթ էր: Նրանք շրջում էին, նկարում էին ամեն ինչ՝ մոշը, ծաղիկները և ընդհանրապես բնությունը: Հետաքրքիր էր տեսնել, թե ինչպես ենք աշխատում: Սիսակը և Դիանան մնացել էին վերևում և չէին իջել սարի ստորոտը, այդ պատճառով որոշեցինք ծանապարհը ընդհատել և հետ վերադառնալ նրանց մոտ: Մինչ այդ եղբայրս հեռացել էր մեզանից, և չէինք կարողանում գտնել նրան: Եղբորս ձայն տալով բարձրանում էինք վեր: Քանի որ մեր հյուրերը սովոր չէին այդպիսի ծանապարհների, եթե, իհարկե, կարելի է դա ծանապարհ համարել, չէին կարողանում արագ քայլել և հոգնել էին: Բարձրանալու ընթացքում Լիլիթը մի ծաղիկ նկարեց, որը բուժիչ հատկություններ ունի: Դրանով թեյ են պատրաստում: Լիլիթը կարծում էր, որ դա ուրց է, բայց ես ասացի, որ դա խնկածաղիկ է: Այսպես դանդաղ, հանգիստ, մի քիչ հոգնելով հավաքել էինք կես դույլ մոշ: Երբ հասանք Սիսակի ու Դիանայի մոտ, Լիլիթը ցույց տվեց ծաղիկը: Սիսակը մտածում էր, որ դա դաղձ է: Եվ այդպես էլ չկարողացանք նրան հակառակը համոզել: Մինչ կատակում էինք, հայտնվեց եղբայրս, ի դեպ, բավականին բարկացած, որովհետև շատ էր ձայն տվել,

փնտրել ինձ, բայց չէր գտել: Նա նույնպես հավաքել էր մոշ: Մեր հավաքածուները միավորեցինք և որոշեցինք հետ դառնալ տուն: Չմոռանա՞նք ասել, որ մոշը հենց նրանք էլ գնեցին: Ամենաուրախ և զվարճալի դեպքը տեղի ունեցավ վերջում: Հետ գալու ժամանակ ես և Լիլիթը մի քիչ առաջ էինք քայլում: Հանկարծ լսեցինք ինչ-որ ձայն, այն նման էր աքլորի կանչի: Չայնը բավականին երկար ժամանակ տևեց: Լիլիթին ասացի, որ երևի արձագանքում է, որովհետև մոտակայքում կային փոքրիկ տներ, որտեղ մարդիկ ամասուններ էին պահում: Բայց ամենասապասելին տեղի ունեցավ, չեք էլ պատկերացնի: Լիլիթը բացահայտեց, որ դա իր հեռախոսի զարթոցիչն էր: Վա~յ, այնքան էինք ծիծաղել: Երևի այս առավոտվա ամենազվարճալի դեպքն էր: Ընդամենը երկու ժամ, որն իր մեջ պարունակեց մի փոքրիկ դրվագ մեր կյանքից: Հուսով եմ, որ մեր երևանցի ընկերները նույնպես հավանեցին մեր էքսկուրսիան: Շատ ուրախ եմ, որ նման մարդկանց հետ են ծանոթացել: Շատ շնորհակալ եմ, որ եկան, շփվեցինք, նորանոր տեղեկություններ իմացանք: Այսօր նրանք կգնան, իսկ մեր ամառային առօրյան էլի նույն կերպ կշարունակվի. լուսադեմից առաջ կբարձրանանք սար՝ մոշ ու ազնվամորի հավաքելու, արևի առաջին ծառագայթներով որոշելու եղանակը, մրցելու մյուս երեխաների հետ, թե ով ինչքան կարողացավ հավաքել, և այսպես մինչև սեպտեմբեր:

Ռուզան Մայիլյան Լոռու մարզ, գ.Օձուճ



Լուսանկար՝ Լիլիթ Կարապետյանի



Լուսանկարը՝ Նիմա Բաղդյանի, 15տ.

Ամառ, փոփոխություններ և թարմություն

Ամառն իրոք որ տրամադրություն է բերում, փոխում մարդկանց, նոր շունչ հաղորդում... Երևի գյուտ չարեցի, բայց այս հայտնի ծշմարտությունը ես միայն այս տարի զգացի իմ հայրենի Գյումրիում:...

Աշնանը կամ առավել ևս ձմռանը, երբ ցուրտ է, տխուր են երկինքը, եղանակը, հետևաբար նաև մարդիկ էին տխրում, թվում էր՝ ապրում են անմարդաբնակ մի վայրում, որտեղ ոչ ոք չկա, ոչ մի հետաքրքրություն ու ոչինչ: Մեր կենտրոնական վայրերում, ինչպես օրինակ, Վարդանանց կամ Թատերական հրապարակներում, այս եղանակներին մատների վրա կարելի էր հաշվել մարդկանց. այն տպավորությունն էր, ասես քաղաքում ոչ ոք չի ապրում: Դե, մենք էլ՝ դիմորդներս, նկատելով ոչ ցանկալի երևույթը, արդեն թևավոր խոսքեր էինք ստեղծել, օրինակ.

-Լեննագան վեցից հետո մենակ պարապողներն էն, էն էլ պարապմունքից տուն կերթան...

Վե՛րջ այս գորշ պատկերին...

Հիմա ամառ է: Ամեն ինչ փոխվել է. քիչ թե շատ փոխվել են մարդիկ, դեմքերը, գույները, տրամադրությունը...

Ամենուր տեսնում ես ուրախ, վառվառն երիտասարդների, պաղպաղակ վայելող ժպտերես մանչուկների, նարդի խաղացող


ծերերի, ինչ-որ հետաքրքիր խմբերի (մեկը կիթառ է նվագում, մյուսը՝ երգում, երրորդը պարում), քննության շտապող ուսանողների, ինձ պես միասնական քննությունները հանձնած ուրախ ու երջանիկ դիմորդների և ընդհանրապես ամառվա անուշ բոլոր վայելող մարդկանց...

Ախր, շա՛տ համահունչ են ամառն ու Գյումրին...

Մի՛ գնա, ամառ: Թող որ հեքիաթը երբեք չավարտվի անկախ եղանակից...

Հ.Գ. էս քննություններից հեղո ըմբէս չէ, օր լավագույն նյութն է, բայց կարևորը լավ տրամադրություն կստեղծէ, ԸԲԸ...

Լեյլի Թադևոսյան
ք.Գյումրի



Լուսանկարը՝ Նիմա Բաղդյանի, 15տ.

Վազաշեն

Դուք գիտե՞ք, թե որտեղ է գտնվում Վազաշեն գյուղը: Վազաշենը գտնվում է Տավուշի մարզում: Ես յոթ տարի սովորել եմ Վազաշեն գյուղում: Իսկ 2014 թվականին եկել եմ Մեծամոր: Վազաշենում ուսումը լավ չէր, շատ առարկաներ ուսուցիչ չուներին: Եկա այստեղ լավ ուսման համար: Հայրս, եղբայրս և մայրս գյուղում են: Քույրս, ով ինձանից երկու տարի է մեծ, արդեն չորս տարի է՝ սովորում է Մեծամորում: Հիմա ես ու քույրս այստեղ միասին ենք ապրում:

Ինձ շատ հուզում է Տավուշի մարզի Վազաշեն գյուղի վիճակը: Այնտեղ չկան աշխատատեղեր, մարդիկ աշխատանք չունեն և միայն փարոսների ու թոշակների միջոցով են իրենց ընտանիքները պահում: Ամեն օր մտածում եմ նրանց մասին: Եթե կարողանայի ինչ-որ բան ավելացնել գյուղում, ապա առաջինը աշխատատեղեր կստեղծեի: Եթե մարդիկ աշխատանք ունենան, իրենք էլ բոլորի պես կապրեն, ու ինձ նման ստիպված չեն լինի հեռանալ գյուղից ու ամբողջ օրը ընտանիքիս, գյուղս, ընկերներիս կարոտել:

Մարիամ Թեյմուրաջյան
Արմավիրի մարզ, ք.Մեծամոր



Լուսանկարը՝ Սիրան Մանուկյանի

Գոյության կռիվ

Մեր խաչներուկը կան «Վերև»-ը, ինչպես այն կոչում ենք մենք՝ ներքևի թաղամասում ապրողներս, ամեն ինչի կենտրոնն է հանդիսանում: Ամենակարևորը, այնտեղ է գտնվում Միկրոշրջան թաղամասի շուկան,

ցավալի է, քանի որ շուկան այն ժամանակ իմ հասակակից երեխաների ամենասիրած վայրն էր: Այն հանդիպատեղի էր շատ շատերի համար: Անհնար էր գնալ շուկա և այնտեղ չհանդիպել քո հին ծանոթներից որևէ մեկին, որը մեզ համար լինում էր դասընկերը, ով ևս ծնողների հետ եկած էր լինում գնումների: Շուկայում միշտ եռուզեռ էր, աղմուկ՝ «ասեղ գցելու տեղ անգամ չկար», մարդիկ իրար հրմշտելով էին անցնում: Իսկ հիմա լրիվ դատարկություն է: Ընկերուհիներով պտտվեցինք ամբողջ շուկայով ու ընդամենը երկու հաճախորդի տեսանք: Մանկության

ժամին պարապմունքի գնալիս, մի տատիկ միշտ առաջարկում է իր մոտից կանաչի գնել: Եվ ինչպես խոստացվել էր՝ «ԿԱՆԳԱՌԸ»: Կանգառում միշտ նույն խնդիրն է. վարորդներին անհրաժեշտ են Երևան գնացողներ: Միշտ, միշտ, միշտ... Անհնար է նրանց կողքով անցնես, և նրանք չասեն. «Երևան գնացող»: Նրանց մոտ ևս գումար վաստակելու խնդիրն է: Մի անգամ քույրս առաջարկեց «գրագ գալ», որ այդտեղով անցնելիս հաստատ կառաջարկեն Երևան գնալ.

-Դե տես, հաստատ ասելու են,- իր բնավորությանը բնորոշ հաստատակամությամբ ասաց քույրս:

-Իսկ ինձ թվում ա՛՝ չեն ասի,- փորձեցի հակառակվել քրոջս: Բավականին անցել էինք, և շատ քիչ էր մնացել, որպեսզի դուրս գայինք կանգառից, ու ես ինձ հաղթանակած էի զգում, երբ վարորդներից մեկը ինձ արթնացրեց երագից.

-Երևան գնացող,- և դիմեց մեզ:
-Տեսա՞ր, որ ասում էի,- հաղթանակից հետո վստահ տոնով հարցրեց քույրս:
-Հա, տեսա,- հաղթանակին մոտ, բայց պարտություն կրած մարզիկի հիասթափությամբ պատասխանեցի ես:

Կենտրոնի չափանիշներին չհամապատասխանող, բայց մեզ համար մի ուրույն Կենտրոն է խաչներուկը կան «Վերևը»:

Հռիփսիմե Եղիազարյան



Լուսանկարը՝ Հռիփսիմե Եղիազարյանի

«ԿԱՆԳԱՌԸ» (միայն հետո կիմանաք, թե ինչու է կանգառ բառը գրված չակերտների մեջ և այն էլ մեծատառերով) և բոլոր տեսակի խանութները:

Նախ սկսեմք շուկայից: Շուկան երկու մասից է կազմված. մի մասում հագուստ են վաճառում, իսկ մյուս մասում միրգ-բանջարեղեն: Շուկայի հետ կապված ցավալի փաստն այն է, որ այն չնայած հավատարիմ վաճառողների՝ դատարկվել է, որոնք օրվա ընթացքում ընդամենը մի քանի հաճախորդի երես են տեսնում, և նրանցից ամեն մեկը շփոթված հաճախորդին փորձում է գրավել իր կողմը՝ հրամցնելով իր ապրանքը ու հավաստիացնելով, որ «ամբողջ շուկան պտտվես էլ մնան ընտիր, որակով ապրանք չես ծարի»: Այս փաստը ինձ համար

երագանք, որը այսօր փոխարինվել է իրարից հարյուրավոր մետրեր հեռու գտնվող խանութների:

Միրգ-բանջարեղեն վաճառողների վիճակը համեմատաբար ավելի լավ է: Չնայած դրան, նրանք ևս ջանք չեն խնայում իրենց ապրանքը վաճառելու համար, որպեսզի կարողանան պահել իրենց ընտանիքը: Ամեն անգամ այդտեղով անցնելիս առաջարկի պակաս չենք ունենում.

-Լավ կյուրմիկը պրծավ...
-Քուր ջան, հլը արի նայի՛ ընտիր ծիրան են ծախում, քեզ էժանով կտամ...
-Գիլաս չե՞ք ուզում, երեխեք ջան, շատ լավ գիլաս ա,- առաջարկում են մեկ այլ կողմից:
Ընկերուհուս, ամեն օր նույն



Լուսանկարը Հռիփսիմե Եղիազարյանի



Լուսանկարը՝ Լիլիթ Կարապետյանի

«Սքայփի վկաները»

-Վահե, մի հատ միացրու Աստղիկին:

-Աստղիկն ո՞վ ա, է, տատի:

-Չես ճանաչի, ընգերուհուս հորքուրի աղջիկը:

-Լավ էլի, տատի:

-Հա, քեզնից ի՞նչ ա է, էթում, բալես, միացրու էլի:

Սքայփը աշխարհի ամենաչափարածս բանն ա: Հա, ճիշտ ա, լավ ա, երբ շփվում ես հարազատ մարդկանց հետ, բայց երբ արդեն մարդիկ սկսում են «համը հանել»...

Քո համար նստած ես, մեկ էլ էդ սքայփի արդեն զգվելի ծլնգոցի ձենն եկավ... Ու գնաց անկապ հարցերի շարանը՝ եղանակը ո՞նց ա, հարևանը ո՞նց ա, դեղձի բերքը ո՞նց ա... Ու տենց շարունակ:

Հա, ու մեկ էլ խոսելու կեսից շատը գնում ա. «Դուք մեզ լսո՞ւմ եք» հարցի վրա:

Բա էն, որ ձեզ սքայփով զանգողի տունը մի հարյուր մետրի վրա ա լինո՞ւմ... Ասա՝ ուզում ես խոսաս, հել արի խոսա, էլի, ի՞նչ սքայփ, ի՞նչ բան...

Մի խոսքով, արդեն հոգնել են, ու տատի, եթե հիմա սա կարդում ես,

ասեմ՝ չեմ զանգելու ոմն Աստղիկի, ու վերջ...

Վահե Ստեփանյան
Վայոց Ձորի մարզ, գ. Մալիշկա

Ինտերնետը տարիք չի ճանաչում

Մի օր բացելով Ֆեյսբուքը, տեսա, որ ընկերության առաջարկ են ստացել 71-ամյա Ջարուիի տատիկիցս: Սկզբում կարծում էի, թե գլուխ չի հանի, բայց շուտով տատիկս սկսեց ավելի ակտիվ ֆեյսբուքյան կյանք վարել, քան ես: Նա միշտ առաջին հավանողների թվում է, երբ մի նոր ֆոտո են տեղադրում, ավելին, ինձանից էլ շատ է ֆոտո ավելացնում: Չաթով քննարկում է վերջին լուրերը, որոնց ֆեյսբուքով է բաժանորդագրված: Իսկ տոներին պատիս շնորհավորանքներ է գրում: Ծուռով արդեն Յություբում (Youtube) բաժանորդագրված էր կարուձևի վարպետների էջերին:

-Հոգյակս, արի քեզ սրանից կարեն,- ասում է տատիկս, երբ

մի հետաքրքիր հագուստի մոդել է գտնում: Դե իհարկե, բոլոր մանրամասները արդեն ֆեյսբուքով ենք պայմանավորվում, վերջում էլ պատրաստի հագուստով նկարս են ուղարկում նրան:

Տատիկիս «գրաված» հաջորդ տիրույթը Փինթերեսթն էր (Pinterest): Երբ վայելում էինք նրա պատրաստած նոր թխվածքը, չէինք էլ պատկերացնում, որ բաղադրատոմսը հենց Փինթերեսթից է գտել:

Վերջերս էլ այգու համար ծաղիկների սերմեր է գնել... օճ-լայն խանութից:

Մի օր էլ, երբ Ինստագրամում (Instagram) նկարներ էի թերթում, տատիկս հարցրեց.

-Հոգյակս, այս ի՞նչ նոր տեղ ա:

-Ինստագրամ, նկարներ ես դնում:

-Լավ, ինձ էլ սրանից կբացես:

Ճիշտ է, տատիկիս բացատրեցի, որ Ինստագրամը միայն սմարթֆոնների վրա է աշխատում, բայց չեմ կարծում, որ այդ փոքրիկ խոչընդոտը կարող է խանգարել նրա նոր բաներ բացահայտելու անսահման ցանկությանը:

Լիլիթ Կարապետյան

Դագերոտիպ և կամերա-օբսկուրա

Դուք հավանաբար արդեն անում եք լուսանկարչության մեջ ձեր առաջին փորձերը: Իսկ հենց ինքը՝ լուսանկարչությունը, իր առաջին փորձերը արել է 1800-ականներին: Նրա ծննդյան օրը համարվում է 1839 թվականի օգոստոսի 19-ը, երբ Ֆրանսիայի ակադեմիայի նիստում հայտարարվեց, որ ոմն Լուի Դագերի հաջողվել է ստանալ և պահպանել լուսային պատկերը: Սակայն այս անգամ, նույնպես, նրա մասին ավելի ուշ:

Հա, ինչ էի ստում: Լուսանկարչությունը ինքնին հիմնադրվել է այդ ժամանակ, բայց դրա հիմքում ընկած առանձին դետալներ ստեղծվել են ավելի շուտ:

Դուք բոլորդ էլ ոչինչ չանելու հետևանքով խցիկը ձեր ձեռքում պահած, կամ կախած պարանոցից մատներով տրորում եք այն «ապակին» ու մի մեծ տգեղ


մատնահետք թողնում դրա վրա: Այդ «ապակին» ոսպնյակն է, և եթե իմանաք, թե ինչ երկար և կարևոր պատմություն ունի, կսկսեք ավելի նուրբ վերաբերվել դրան՝ չփչացնելով ձեր լուսանկարները:

Ուրեմն այսպես, ոսպնյակը առաջին անգամ օգտագործել են Օլիմպոս լեռան վրա կրակ ստանալու համար, իսկ հնագետ Շլիմանը, որը պեղել և գտել է Տրոյա քաղաքը, պեղումների ժամանակ գտել է ի՞նչ, այո՝ ոսպնյակ: Հետագայում այն օգտագործել են մանրադիտակներ ու աստղադիտակներ պատրաստելիս, և վերջապես, ձեզանից ոմանք կրում են օպտիկական ակնոցներ: Ավելի ուշ ստեղծեցին օբյեկտիվ: Առաջին անգամ օբյեկտիվ ստեղծեց Ֆոկլենդերը:

Լուսանկարի մյուս բաղադրիչների՝ լուսազգայուն նյութերի մասին առաջինը իմացել են ալքիմիկոսները:

Երևի հիշում եք, որ ես հաճախ

ակնարկում էի մի մարդու մասին, ով ստեղծել էր ինչ-որտիպ: Այո, այո, դագերոտիպ: Այդ ժամանակ լուսանկարն այդպես էին անվանում: Պատկերացրեք, որ հիմա դուք ձեր ընկերոջը ասեիք ոչ թե՛ «արի ինձ լուսանկարի», այլ՝ «արի ինձ դագերոտիպի»: Ծիծաղելի է, չէ՞: Հիմա պատկերացրեք, որ իրարից առանձին երկու մարդ ստեղծում են սենյակի մեծությամբ տեսախցիկ, բայց նրանցից առաջինը կարողանում է մնայուն պատկեր ստանալ, երկրորդը՝ ոչ:



Մի օր այն երկրորդը իմանում է առաջինի հաջողության մասին, նրա հետ համաձայնության գալիս: Նրանք զարգացնում են այդ տեխնոլոգիան՝ հասցնելով գիտական բացահայտում ճանաչելու շեմին, բայց գյուտը դեռ չգրանցած, առաջինը մահանում է, և բացահայտումը վերագրում են երկրորդին: Խճճվեցի՞ք, ուրեմն...

Սենյակի մեծությամբ տեսախցիկը կամերա օբսկուրան է՝ առաջին ֆոտոխցիկը, որը բառացիորեն նշանակում է՝ մութ սենյակ: Առաջինը Ժոզեֆ Նիսեֆոր Նեպսն էր, ով պատկերը կարողացել էր ամրացնել ասֆալտի լաթով պատած պղնձե թիթեղի վրա: Իսկ երկրորդը Լուի Դագերն էր, ով Նեպսի հետ աշխատելուց հետո միայն կարողացել էր ամրացնել պատկերը, բայց արծաթե թիթեղի վրա: Ի դեպ, Դագերի տեխնոլոգիայի «դարաշրջանը» տևեց ընդամենը տասը տարի, քանի որ արծաթե թիթեղը թանկ էր, և պատկերն էլ

երկար չէր պահպանվում:

Հավանեցի՞ք պատմությունը:

Այսքանից հետո դուք երևի ուզում եք իմանալ, թե ո՞րն է առաջին լուսանկարը: Այն արել էր հենց Նեպսը, բայց լուսանկարը չի պահպանվել, այդ պատճառով էլ առաջինն է համարվում Նեպսի մեկ այլ լուսանկար՝ «Տեսարան պատուհանից»: Մարդիկ ցնցված էին այն փաստից, որ պատկերը, որը նրանք տեսնում են, նկարել է ոչ թե նկարիչը, այլ արևի շողերը, որոնք մի փոքր անցքից ընկել էին լուսազգայուն նյութի շերտի վրա: Երևի այս ամենի մեջ ձեզ համար ամենաշոկայինը այն էր, որ ձեր ձեռքի փոքր, կամ գուցե ձեզ համար մեծ թվացող խցիկը ի սկզբանե եղել է ձեր մի սենյակի չափ, որը լուսավորված է եղել միայն մեկ փոքր անցքով: Ինչևէ...

Հիմա մեզ համար շատ հեշտ է, մի քանի անգամ չխկացնում ենք

և հենց տեսախցիկի էկրանին, կամ համակարգչով էլ նայում ենք մեր լուսանկարները: Բայց առաջ եթե ուզում էիր տեսնել քո լուսանկարը, պետք է քո ձեռքերով երևակեիր այն, կախեիր մինչև չորանար, տպեիր, քիմիական նյութերով լվանայիր, նորից չորացնեիր: Ի դեպ այժմ դեռ կան լուսանկարիչներ, ովքեր շարունակում են ժապավենով նկարել և հենց իրենք էլ երևակում են սեփական լուսանկարները: Այդ կերպ նրանք զգում են իրենց պատկերացրած կադրի լուսանկար դառնալու ողջ կախարդական գործընթացը:

Դիանա Շահբազյան

Սյու թաունսենդ Ադրիան Մուլի օրագրերը

Անգլերեն հրատարակված այս գրքի հենց առաջին հրատարակությունը սպառվեց մեծ արագությամբ, այն էլ հինգ միլիոն տպաքանակով: Հետո գիրքը թարգմանվեց տասնվեց լեզուներով:

Ինչո՞ւ է այս գիրքը նման հաջողություն վայելում, ինչու են գրքի հերոսին՝ իրեն ինտելեկտուալ և տաղանդավոր պոետ համարող դեռահասին համեմատում Դիկենսի հերոսների հետ, և ո՞վ է մինչ այդ բոլորին անծանոթ հեղինակը:

Սյուզենը հենց նույն միջավայրից է, ինչ իր հերոսը: 18 տարեկանում ամուսնացել է մետաղաձուլարանում աշխատող բանվորի հետ, ունեցել երեք երեխա և ծանր կյանք: «Երբ մենք ամուսնացանք, ամուսինս 19 տարեկան էր: Նա շատ ծանր աշխատանք էր անում, սակայն գրողներ էր ստանում: Բնակարանի, ջեռուցման վարձերը մարելուց և սնունդ գնելուց հետո անգամ մի պեննի չէր մնում», - հետագայում գրել է Սյուն: Ինչն էր օգնում երիտասարդ բազմազավակ մորը, որը ոչ կրթություն ուներ (15 տարեկանում թողել էր դպրոցը), ոչ մասնագիտություն, չհանձնվել, երբ ամուսինը լքեց իրեն ու երեք երեխաներին. մանկությունից ծնողների կողմից իրեն փոխանցված կամքի ուժը և ընթերցասիրությունը:

Թաունսենդը աշխատել է տարբեր մասնագիտություններով, ներառյալ հավաքարար ու փոստատար: Տարիներ անց նա հանդիպում է թիավարության մարզչի հետ և շուտով ինքն էլ դառնում է կանոնի թիավարության հրահանգիչ: Ծնվում է նաև Սյուի չորրորդ երեխան: Հենց երկրորդ ամուսնուն է Սյուզենը խոստովանում, որ երազում է գրող դառնալու մասին: Ծուռով կարողանում է թիավարությունը համատեղել գրականության հետ: Իր առաջին պիեսի համար

Թաունսենդը արժանանում է մրցանակի: Իսկ այս իրադարձությունից արդեն տասը տարի հետո Սյու թաունսենդը հռչակվեց իբրև անգլիական գրականության դասական: Գրողի խոստովանությամբ սակայն, իր ամենամեծ նվաճումն այն է, որ սեփական երեխաները մեծ հաճույքով ընթերցում են իր գրքերը: Ձեզ են ներկայացնում մի հատված «Ադրիան Մուլի օրագրերը» գրքից:

Մաս Առաջին

Տասներեք տարեկան ինը ամսեկան Ադրիան Մուլի գաղտնի օրագիրը Երեքշաբթի, 1-ը հունվարի

Այսօր ոչ աշխատանքային օր է Անգլիայում, Իռլանդիայում, Շոտլանդիայում և Ուելսում:



շանը: Եթե կենդանիների պաշտպանության կոմիտեից իմանային այդ մասին, հայրիկիս բանը բուրդ կլիններ: Թեև Սուրբ Ծննդից արդեն ութ օր անցել է, սակայն մայրիկը դեռ չի կապել իմ նվիրած գոգնոցը: Հաջորդ անգամ լոգարանային պարագաներ կնվիրեմ:

Բախտս բերում է: Նոր տարվա առաջին օրն է, ու արդեն երեսիս բշտիկներ են դուրս եկել:

Ուրբաթ, 2-ը հունվարի Շոտլանդիայում ոչ աշխատանքային օր է: Լիալուսին:

Սարսափելի են գգում: Եվ մեղավորը մայրիկն է, ում խելքին փչել էր գիշերվա երկուսին վերև ելնել ու ձայնը գլուխը գցած երգել: Երևում է, շուտով ծնողներս հարբեցող կդառնան: Մեկ-երկու տարի հետո մանկատանը կհայտնվեմ:

Շերի-բրենդիի համար շունը հայրիկից վրեժ լուծեց: Ցատկեց ու սեղանի վրա դրած առագաստանավի մոդելը, որ հայրիկն էր պատրաստել, վայր գցեց և քարշ տվեց պարտեզ: Իսկ հայրիկը թութակի պես կրկնում էր. «Երեք ամսվա աշխատանքս շան բաժին եղավ»: Կզակիս վրա դուրս եկած բշտիկը ավելի է ուռել: Մայրիկի մեղքով է: Նա անգամ չգիտի, թե ինչ է վիտամինը:

Շաբաթ, 3-ը հունվարի

Անքնությունից ես կզժվեմ: Հայրիկը շանը տանից դուրս էր հանել, և շունն ամբողջ գիշեր ոռնում էր պատուհանի տակ: Բախտս բերում է, համա թե: Հայրս հայիոյանքների տարափ տեղաց: Այսպես շարունակի, հայիոյանքների համար կծերբակայեմ:

Բշտիկը կարծես ուր որ է կայայթի: Իսկական փորձանք: Ամենաերևացող տեղում: Ես մայրիկին ասացի, որ ողջ օրը վիտամին C չեմ ստացել: «Գնա՛ մարինչ առ»: Միշտ այսպես է: Իսկ գոգնոցը այդպես էլ չկապեց: Աստված իմ, ե՛րբ են դպրոց գնալու:

Ես հաստատ որոշել եմ Նոր տարուն. Կույրերին անցկացնել փողոցը, անդրավարտիքը կախել իր տեղում, սկավառակը մտցնել կազմի մեջ, շանը վերաբերվել քնքշանքով, լինել բարի և անքաղաքավարի, այլևս չսեղմել երեսի բշտիկները, չսկսել ծխել: Գիշերը հյուրասենյակից լսվող տհաճ աղմուկից հետո ես երգվեցի ոգելից խմիչքների անգամ մոտ չգնալ: Երեկ երեկույթի ժամանակ հայրիկը շերի-բրենդի էր խմեցրել



Կիրակի, 4-ը հունվարի Սուրբ Ծննդից հետո երկրորդ կիրակին:

Հայրիկը հարբուխ է: Մեր սննդկարգի պայմաններում զարմանալի չէ: Հորդառատ անձրևի տակ մայրիկը գնաց վիտամինացված ըմպելիք գնի, բայց ես նրան ճիշտն ասացի: Ծուտ էր պետք մտածել: Հրաշք է, որ դեռ ցինգա հիվանդությամբ չենք տառապում: Մայրիկը համոզում է, թե դնչիս վրա ոչինչ չի երևում: Խիղճը երևի տանջում է, թե ինչպես է ինձ կերակրում: Նա մոռացել էր փակել դարպասը, և շունը փախավ: Ես ջարդեցի ձայնարկիչի ասեղը: Առայժմ ոչ ոք չի նկատել: Եթե բախտս բերի, հայրիկը դեռ երկար անկողնային հիվանդ կլինի, իսկ բացի ինձնից և հայրիկից տանը ոչ ոք ձայնակալվառակ չի լսում: Նվիրածս գոգնոցը մայրիկը դեռ չի կապում:

Երկուշաբթի, 5-ը հունվարի

Ծունը դեռ չի վերադարձել: Առանց նրա խաղաղ է ու հանգիստ: Մայրիկը զանգահարեց ոստիկանություն, և տվեց շան նկարագիրը: Նրա պատկերացումներով շունը ավելի սարսափելի էր, քան իրականում կար: Իմ կարծիքով, ոստիկանությունն ավելի լուրջ գործերով պետք է զբաղվի: Օրինակ, մարդասպաններին փնտրի: Ես այս մասին հայտնեցի մայրիկին, բայց նա այնուամենայնիվ զանգեց: Այ, քանի ոստիկանությունը շանն է որոնում, կսպանեն իրեն, նոր կիմանա: Հայրիկը դեռ անկողնում է: Հիվանդիս տեսք, ծխում է: Այսօր Նայջելը եկավ: Վերադարձել է Ծննդյան արձակուրդներից, արևայրուքով: Երևի շուտով կհիվանդանա: Անգլիայում ցուրտ է: Ծնողները չպիտի իրենց հետ քարշ տային տաք

երկրներ: Բայց երեսին ոչ մի բշտիկ չկա:

Երեքշաբթի, 6-ը հունվարի Մկրտություն: Նորայրուհին:

Մեր շունը փորձանք է: Ընկել է գազի տեսուչի հեծանիվի տակ, վայր գցել նրան: Տեսուչի թղթերը շաղ են եկել ու կորել: Մեզ դատարան քարշ կտա հաստատ: Իսկ ոստիկանն ասաց, որ շանը պետք է հսկել, և հետո, արդյո՞ք վաղուց է կաղում: Մայրիկը պատասխանեց, որ մեր շունը չի կաղում: Հետո ուշադիր նայեց և տեսավ, որ հայրիկի առագաստանավակի խաղալիք ծովահենը թաթի մեջ է: Ծունը հրժվանքից գլուխը կորցրել էր, երբ մայրիկը խաղալիքը հանեց թաթի միջից: Նա ուրախությունից թռավ ու թաթերը դրեց ոստիկանի ուտերին: Թաթերը կեղտոտ էին, և ցեխոտեցին համազգեստը: Մայրիկը խոհանոցի լաթը բերեց, որ մաքրի, սակայն լաթը մուրաբայոտ էր, քանի որ ես դրանով մաքրել էի դանակը: Այնպես որ, համազգեստի ցեխաբծերին ավելացան նորերը: Մի խոսքով, ոստիկանը գնաց: Ես հաստատ լսեցի, թե նա ինչպես հայիոյեց: Ի դեպ, կարող էի նրա դեմ բողոք գրել: Պետք է բառարանում մայել, թե ինչ է նշանակում «մկրտություն»:

Չորեքշաբթի, 7-ը հունվարի

Առավոտյան իր նոր հեծանիվին նստած եկավ Նայջելը: Հեծոն տափաշիչ ուներ, արագաչափով, տարածաչափով, դեղին թամբով, նուրբ մրցավազբային անիվներով: Նայջելին նման հեծանիվ գնել, նույնն է, թե փողը ջուրը գցել: Նա բացի խանութ գնալ-գալուց ուրիշ ոչ մի տեղ չի գնալու: Եթե ես նման հեծանիվ ունենայի, ճանաչողական նպատակներով ողջ երկիրը ման կգայի: Իմ բշտիկը պայթելու աստիճան փքվել է: Բառարանում գտա հորս բնորոշող բառ՝ «սիմուլյանտ»: Ողջ օրը անկողնում պառկած է, վիտամին C է ուտում: Ծանր փակեցին խորդանոցում: «Մկրտությունը» մոգերի հետ կապված բառ է պարզվեց: Պահ...

Երեքշաբթի, 8-ը հունվարի

Հիմա էլ մայրիկն է գրիպ վարակվել: Դա նշանակում է, որ երկուսին էլ ես եմ խնամելու: Համա թե բախտս բերում է: Ողջ օրը աստիճաններով վերուվար էի անում: Համեղ ընթրիք պատրաստեցի՝ պինդ խաշած հավկիթ, ոլոռ և պահածոյացված սպիտակաձավարի պուդինգ: Լավ է, որ մայրիկի նոր գոգնոցն էի կապել, կաթսայից ափսեի մեջ լցնելիս ճաշը թափեցի վրաս: Ինձ հագիվ զսպեցի, որպեսզի մի քանի «քաղցր» խոսք չասեմ ծնողներս, որովհետև ուտելիքին ձեռք չէիմ տվել: Հասկացանք, որ հիվանդ են, բայց ոչ այդքան... Ընթրիքը տարա տվեցի շանը: Առավոտյան տատիկը գալու է, այնպես որ, ստիպված եղա լվանալ սևացած կաթսաները և շանը զբոսանքի տանել: Պառկեցի քնելու կեսգիշերին: Որոշել եմ. բժիշկ չեմ դառնալու:



Ուրբաթ, 9-ը հունվարի

Խոսքները մեկ արած ողջ գիշեր հագում էին: Կարող էին մի քիչ էլ իմ մասին մտածել: Հոգնածությունից մեռնում եմ:

Եկավ տատիկը: Տեսավ, թե ինչ է կատարվում տանը, կատաղեց: Ես նրան ցույց տվեցի իմ սենյակը, որը միշտ հավաքած և կոկիկ են պահում: Տատիկն ինձ հիսուն պենս տվեց: Ես ցույց տվեցի աղբարկղում լցված դատարկ շշերը: Տատիկը ավելի կատաղեց:

Նա խորդանոցից ազատ արձակեց շանը՝ ասելով, որ մայրիկը դաժան է վարվել: Շունը հետ տվեց խոհանոցում: Տատիկը նրան նորից փակեց խորդանոցում:

Տատիկն իմ բշտիկը սեղմեց: Ավելի վատ տեսք ստացա: Ես պատմեցի նրան մայրիկին իմ նվիրած կանաչ գոգնոցի մասին: Տատիկն ասաց, որ ամեն տարի ինքն էլ մաքուր ակրիլից սվիտեր է նվիրում մայրիկին, բայց նա երբեք չի հագնում:

Շաբաթ, 10-ը հունվարի

Առավոտ: Հիմա էլ շունն է հիվանդացել: Նա անընդհատ փսխում է: Ստիպված ենք անասնաբույժ կանչել: Հայրիկն արգելեց անասնաբույժին պատմել, որ շանը երկու օր ածուխի խորդանոցում ենք պահել: Բշտիկիս վրա կաչուն վիրակապ փակցրեցի, որպեսզի շնից վարակ չանցնի:

Եկավ անասնաբույժը, տարավ շանը: Կասկածում է աղիների անանցանելիություն: Շտապ պետք է վիրահատել: Տատիկը վիճեց մայրիկի հետ և գնաց տուն: Գտա սուրբծննդյան սվիտերները աղբարկղի մեջ կտոր-կտոր արած: Ստորություն է այսպես վարվել, երբ մարդիկ սովամահ են լինում:

Հարևան Լյուկասը եկավ ծնողներին այցելության: Նրանք դեռ չեն վեր կենում անկողնուց: Մայրիկին ծաղիկներ էր բերել և բացիկ՝ շուտափույթ ապաքինման մաղթանքով: Մայրիկը նստել էր անկողնու մեջ: Լայն բացվածքով գիշերազգեստը հազիվ էր ծածկում կուրծքը: Հարևանի հետ խոսում էր անպարկեշտ ձայնով: Հայրիկը քնած ձևացավ:

Եկավ Նայջելը: Բերեց իր սկավառակները: Նա պանկերով է տարված, բայց ես իմաստ չեմ տեսնում, բառերը մեկ է, չեն հասկացվում: Եվ առհասարակ, զգում եմ, որ ինտելեկտուալ եմ դառնում, հավանաբար հոգսառատ կյանքից է:

Երեկոյան շանը տեսակցելու գնացի: Արդեն վիրահատել էին: Անասնաբույժը մի տուպրակ «զըրթուզիբիլ» էր հանել. ածուխի կտոր, ամանորյա տորթի վրայի տոնածառը, հայրիկի առագաստանավի ծովահեններից: Մի ծովահենը թափահարում էր թուրը, որը երևի անտանելի ցավ էր պատճառել շանը: Հիմա շունը ավելի լավ է զգում իրեն: Մի երկու օրից կարելի է տուն տանել: Ցավոք սրտի: Երբ վերադարձա տուն, հայրիկը կախված էր հեռախոսից: Տատիկի հետ էր վիճում աղբարկղի դատարկ շշերի պատճառով:

Լուկասը վերևում գրուցում էր մայրիկի հետ: Երբ նա գնաց, հայրիկը վերև բարձրացավ ու սկսեց մայրիկի հետ վիճել: Մայրիկը սկսեց լաց լինել: Հայրիկը անտրամադիր է: Ուրեմն լավանում է: Ես մայրիկին մի գավաթ թեյ տարա, չնայած չէր ուզել: Նա նորից լաց եղավ: Որոշ մարդկանց ոչ մի կերպ չես կարող սիրաշահել:

Իսկ բշտիկը այդպես էլ չի լավանում:

**Կիրակի, 11 հունվարի
Սկրտությունից հետո առաջին
կիրակին**

Հիմա ես հաստատ գիտեմ, որ ինտելեկտուալ եմ: Երեկ հեռուստացույցով դիտում էի Մահերիջի հաղորդումը և հասկանում էի յուրաքանչյուր բառը: Ամեն ինչ ասես իմ մասին լինի. դժվարություններ ընտանիքում, վատ սնունդ, «պանկերի» հանդեպ տհաճություն: Թերևս գրադարան գրվեմ, կերևա թե ինչ կլինի: Ափսոս, ուրիշ ինտելեկտուալ չկա մեր շրջապատում: Լյուկասը թեև նորածն տաբատ է հագնում, բայց ապահովագրական գործակալ է ընդամենը: Ափսոս:

Երկուշաբթի, 12 հունվարի

Շունը դարձյալ տանն է: Անդադար լիզում է վերքերը: Ուտելիս նրան մեջքով եմ նստում: Առավոտյան մայրիկը անկողնուց վեր կացավ: Որոշեց շան համար ավելի հարմար տեղ պատրաստել, որպեսզի քնելու համար հարմար լինի, քանի դեռ չի ապաքինվել:

Լվացքի փոշու տուփի մեջ լաթ դրեց: Հայրիկն ասաց, որ այդ փոշուց շունն այնպես կփռշտա, որ կարերը կքանդվեն, և անասնաբույժը նորից կարելու համար մեզմից փող կպլուկի: Սկզբում նրանք արկղի համար էին վիճում, հետո հայրիկը սկսեց Լյուկասի պատճառով վիճել: Բայց թե ինչ կապ ունեւր Լյուկասը շան հետ, այդպես էլ չհասկացա:

Երեքշաբթի, 13 հունվարի

Հայրիկն աշխատանքի գնաց: Փառք Աստծո:

Առավոտյան այցելեց Լյուկասը: Ուզում էր իմանալ՝ մայրիկն օգնության կարիք ունի: Այդ ժամանակ միսիս Լյուկասը պատուհաններն էր լվանում: Աստիճանն իմ կարծիքով խախտու էր: Ես նամակ գրեցի Բի Բի Սի՝ ինչպես պետք է վարվի ինտելեկտուալը: Հուսամ՝ շուտ կպատասխանեն: Ես նաև բանատեղծություն գրեցի մի երկու թուղթով: Նույնիսկ ամենանշանավոր պոետներն այդքան արագ չեն գրում: Բանաստեղծությունը վերնագրել եմ «Ծորակը», թեև իրականում ծորակի մասին չէ, այլ ավելի խորը՝ կյանքի: Ես այն ցույց տվեցի մայրիկին, սակայն նա ծիծաղեց: Մայրս այնքան էլ զարգացած չէ: Հեռուստատեսային ֆիլմերում մայրիկները բոլորովին նրա նման չեն:





Նկարը՝ Աճրի Զիլնգարյանի 11տ.



Կենտրոնացեք երեխայի մեջ լավը զարգացնելու վրա, այնպես որ, արդյունքում տեղ չմնա վատի համար:



Պատանի թղթակիցների նյութերը պատրաստվել են Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Երիտասարդների արտահայտման ազատության խթանումը քաղաքացիական լրագրության միջոցով» ծրագրի շրջանակներում:



Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Մանանա-հրատ» ՍՊԸ Վկայական՝ 02Ա046931 տրված՝ 31.12.1999

Թողարկումը պատրաստել են «Մանանա» մանկապատանեկան կրթամշակութային կենտրոնի սաները

Նկարները՝ Անրի Չիլինգարյանի 11տ., Լիլիթ Սողոյանի 12տ.



Երևան, Մաշտոցի 45Ա, բն. 40, հեռ. 58 16 70
էլ. փոստ. 17am.reporter@gmail.com
www.17.am, www.mananayouthcenter.org

Տպագրված է Անհատ ձեռնարկատեր Սուրեն Ղալաչյան տպագրատանը Տպաքանակ՝ 2000